№ 36 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 17

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 17 № 36

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907Թ.

„ՄՈՒՐՃ"

Գրական, հասարակական և քաղաքական

ԱՄՍԱԳՐԻ

(Նոր շրջան VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ռ., կէս տարին 6 ռ., ամսական 90 կ. Արտասահմանի համար՝ տարեկան 12 ռ. (32 ֆ.), կէս տարին 7 ռ. (18 ֆ.), ամսական 3 ֆ

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ռ.). երկրորդ վճարը լինում մայիսին։ Տարբ. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանւորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 ռուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ռ.)։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փող., տ. № 12) և «Գուտտենբերգ» գրախն. (Երևան. հրապ.) և «Новая Рѣчь» գրախն. (Գօլովինսկի պրոսպ. թատր. դիմաց)։

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ».

Արտասահմանից՝ Tiflis, Rédactio de la revue «MURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամեն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բռնող յայտարարութեան համար 10 ռ., 1/2 եր. 5 ռ., 1/4 եր. 2 ռ., տողատեղ (կօրպուս) 40 կ.։

8—0 Խմբագիր՝ Լևոն Սարգսեան

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵԼԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կօպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ԲՈՒՌԴԷՆԿՈ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒՐԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հիւ. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԵԼՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, շաբաթշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՈՎ.—Վիրաբուժ., մեզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍԳԻՍՕՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. ուրբ. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԳՈՎՍԿԻ.—Ներքին հիվանդով ամենայն 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏԵՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՅԿՍԿԻ.—Երես., երկ., շաբաթ 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒԾՄԻՆ.—Ականջի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երես., երեքշ. շաբաթ, ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՈՐՈՎ.—Ասամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒՐԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. զեմն. մասաժ, նէլէքտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՑԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԵԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ Գ, ԳՕՐԱՆԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երես., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիվանդներ ամառուներ և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 69—144

Բ Ժ Ի Շ Կ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝

ներքին եւ վենեռական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակ, Սերգիևսկայա 15, Փրիդօնովի տանը։

առ. (չ.ու.շ.) 41—100

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հ Ի Ւ Ա Ն Դ Ա Ն Ո Ց

Անաստասէվկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն։

Երթեւեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետեւեալ բժիշկների ձեռքով.

Ա. Ր. Թիշէր.—երեքշաբթի, շաբաթ։

Ա. Գ. Բարսուկով.—չորեքշաբթի։

Ս. Պ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։

Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկովը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկո-միկրոսկոպական հետազոտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստումն և այլն։

(հ. շ. ե.) 7—50

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻԶ"

իւմօր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

VI-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ"

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կօպ.։

Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» 1 պրէմիան։

Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 ռուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 ռուբլի 50 կօպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46 18.

«ՍԱՓՐԻԶ»-Ի խմբագրութիւն

ե. շ. առ. 6—25

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երկուշաբթի, փետրվարի 19-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

Տ. ՍԻՐԱՆՈՑՇԻ բենեֆիսին

կը ներկայացնէ

Առաջին անգամ հայ բեմի վրա

ՀԵԳԴԱ ԳԱԲԼԷՐ

Դրամա 4 արար., Իբսէնի, թարգ. Ս. Եսայեանի

Մասնակցում են. տ.տ. Արաքս, Սիրանոյշ, Վարդուհի, Օհանեան, պ.պ. Աբէլեան, Զարիֆեան և Յարութիւնեան։

Սկիզբը երեկոյեան ժամը հիշտ 8-ին է

Տեղերի գները բենեֆիսի են

Վարչութեան հերթապահ անդամ՝

Ա. Խատիսեան

Բեժիսեր Յ. Աբէլեան

առ. 2—2

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ

ՀԱՄԱՐՆԵՐ

„ՎԻԿՏՈՐԻԱ"

Թիֆլիսի կենտրոնում, Դվօրցովայա փողոցի վրա, Փոխարքայի պալատի այգուն կից 40 համարները գեղեցիկ կերպով կահաւորված են և ունեն ամեն տեսակ յարմարութիւններ իջևանողների համար։

Օրական վարձը 60 կօպ. սինչև 4 ռուբլի. ամսական վարձողներին զիջում կը լինի։ Ծառաները ստահելի և քաղաքավարի են։

Ընտանիքով եկողներին տրվում է խոհանոցը և լուացքի տեղը ձրի։ Ունի սեփական ճաշարան։

ՏԱՌ ԵՒ ՍԱՌՐ ՎԱՆՆԱՆԵՐ

Ելէքտրական լուսաւորութիւն։ Հեռախ. №1033

Համբարձում Եսայեանց

(չ. շ.) ա 4—10

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսոյս 18-ին, ցերեկվայ 12 ժամին, Կուկիոյ-Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում լինելու է՝ ծխականների երկրորդ և վերջին ժողով նոր երեցփոխի ընտրութիւն կատարելու, ուր ի մէջի այլոց քննութեան կանվեն անցեալ 1906 թւի եկեղեցու մուտքի և ծախքի հաշիւները և կը կազմվի ու կը հաստատվի ներկայ տարվայ նախահաշիւը։ Սրա համար խնդրում եմ նոյն եկեղեցու երկրորդ ծխականներին՝ որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների ը. մասի գործակալ՝ Ղևոնդ քահ. Մամիկոնեանց

առ. 1—1

ՀՐԱՒԷՐ

Հայոց վիճակային կօնսիստորիայի ներկայ տարվայ փետրվարի 13-ին թ. 529 արձակած հրամանի համաձայն՝ ամսոյս 18-ին, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին, ս. Նշան եկեղեցումը ծխականների ժողով է լինելու երեցփոխի զանազանութիւնները քննելու համար, ուստի սրանով պատիւ ունիմ հրաւիրել յիշեալ եկեղեցու բոլոր ծխերին՝ շտապել նոյն օրը և ժամին եկեղեցի քննութեանը մասնակցելու։

Գործակալ Գրիգոր աւագ քահ. Մանդակունի

առ 1—1

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՁԵՂ

(искуственная вощина)

Պատրաստում եմ ձեռնտու գնով, փետրվար և մարս ամիսներում

Հասցէս Սեր. Բոլ. Կարակլիսցի Աւետիս Աղաբաբեանցի։

առ. օր. մ. 12—15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական խնդիրներ. Վերջին տեղեկութիւններ. Պատգամաւորների կազմը. Մամու. Տեղեկութիւններ գաւառից. Զիւանշիրի ներկայ. Ընտրութիւնների արդիւնքը. Կառավարչական փաստեր և լուրեր. Բանւորական շարժումներ. Իրականութիւն և իմ բացատրութիւններ. Տեղեկութիւններ Բաթումից. Նամակ Բաթումից. Նամակ Արդուինից. Երկու խօսք Վ. Սիրդին. Հեռաբերբական երևոյթ. Ներկայացուցչական կառավարութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր։ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

I

Այժմ, երբ մօտենում է Պետական Դումայի բացումը և ընդարձակ պատուութեան ներկայացուցչական մարմինը պէտք է զբաղվի այն բոլոր խնդիրներով, որոնք ունեն կենտրոնական նշանակութիւն ժողովրդական մասսաների համար, անհրաժեշտ է, որ մենք հրապարակական քննութեան նիւթ դարձնենք մեր երկրի հասարակական բոլոր խնդիրները և պարզենք մեր կարծիքները և պահանջները։

Շատ և չափազանց շատ են հերթական դարձած խնդիրները. բայց այդ հանգամանքը մեզ չը պէտք է շուարեցնէ և վախեցնէ, այլ ընդհակառակը աւելի ևս մեծ ոյժով ոգևորէ մեզ ձեռնարկելու այն խորը ու պատասխանատու գործին, որ կրում է ժողովրդական գործ անուն։

Կան խնդիրներ, որոնք կարող են լուծվել Պետական Դումայի միջոցով, կան և այնպիսիներ, որոնք ընթացք կը ստանան, հէնց որ դիւրացված կը լինի տեղական ինքնագործութիւնը և ինքնավարութիւնը։

II

Երկրին և ժողովրդին մօտ կանգնած մարդիկ, սերտ կերպով համախմբվելով միասին և միահամուռ ոյժերով քննութեան ու մշակութեան ենթարկելով կեանքի հարցերը, կը տան նրան այն լիակատարութիւնը, բազմաբովանդակութիւնը և կենսունակութիւնը, որոնք պակասում էին մինչև այժմ, երբ ամեն բան վճռվում էր ժողովրդի մասնակցութիւնից հեռու, զանազան դիւանատներում և բիւրոկրատական նեղ շրջաններում։

Կեանքը մուտք է գործում այն օրէնդրական և վարչական շրջանների մէջ, որտեղ մինչև այժմ ամեն բան կատարվում էր հնացած, ձևական կերպով և որտեղ դեռ էր կատարում ոչ այնքան երկրի և մարդկանց պահանջը, որքան կառավարիչների ճաշակն ու հայեցակէտը։

Եւ հասկանալի է, որ կեանքը մուտք գործելով ատեանների մէջ, բերում է իր վերանորոգող և մաքրող ոգին, դէն վռնտելով բոլորը, ինչը միայն դիւանական ճահճի ծնունդն էր և մարդկանց շահերի աղաւաղումն։

III

Մենք հրաւիրվում ենք հասարակական գործունէութեան, նրա բուն իմաստով։ Եւ անհրաժեշտ է, որ մենք կարող լինենք ապացուցանել, թէ կեանքի մարդիկ, երկրին և ժողովրդին մօտ մարդիկ, աւելի լաւ ու խելացի կերպով կարող են ձևակերպել իրանց կարիքները և պաշտպանել իրանց շահերը, քան այն դիւանական գործողները, որոնք գիտէին շատ բան, բացի կեանքի պահանջներից։

Երկար ժամանակ լռութեան և անգործութեան մատնված մեր հասարակութիւնը, երկիւղի, սպառնալիքների ենթարկված մեր ժողովուրդը, վստահութիւնը դէպի բարձր շրջանները կորցրած մեր գործողների շարքերը անուշադիր իսկոյն չեն կարողանայ լուրջ և ընդարձակ գործեր կատարել, բայց նրանք եթէ եռանդով ու անձնուիրութեամբ ոտք կոխեն այդ նոր ճանապարհի վրա, սկիզբը կը դնեն խոշոր գործի, որը շատ շուտով կընդարձակվի և կը բարգաւաճի։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօնդօն, 15 փետրվարի.—«Դէյլի-Մէյլին» հաղորդում են Թեհրանից, որ կառավարութեան և մէջլիսի կուսակցութեան մէջ մղվող կռիւը օրէցօր աւելի լուրջ բնաւորութիւն է ստանում։ Կառավարութիւնը վերջիվերջոյ ստիպված կը լինի ազգային բանկում 6 միլ. ֆունտ ստերլինգի մի փոխառութիւն կնքել 6 ամսից յետոյ վճարելու պայմանով։ Փոխառութիւնը ծածկելու ապահովութիւն հանդիսանում են Պարսից ծոցի և ցամաքային սամանագլխի մաքսատների հասոյթները, որոնք ամբողջովին կանցնեն բանկի գանձարանի ձեռքը։

(«Հ. Գ.»)

Զուգդիդի, 15 փետրվարի.—Մինգրէլիայի սուլթանին լրագիրներից մի քանիսի յամառօրէն տարածած լուրերին հակառակ, տեղումս փաստացի սով չը կայ։ Սիվինտրի պուդը վաճառվում է 45 կօպէկով։

(«Հ. Գ.»)

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Վիտասի նահանգի կողմից—Ալաշէվ, Ելաբուժսկի զեմստվոյին վարչութեան նախկին նախագահ, սոցիալ-յեղափոխական. Դելարով, ուղէնի վարչութեան գիւղատնտես, ժողովրդական սոցիալիստ. Տիխվինսկի, քահանայ, առաջադիմական. Բախրուշէվ, բանւոր, սոց.-դեմ. Մատագուտով, թաթարական ազգութիւն, սոցիալ-յեղափոխական. Զայցէվ, զեմստվոյին բժիշկ, սոցիալ-յեղափոխական. Սալտիկով, գրավաճառ, հակակառանաւարտ, սոց.-յեղափոխական. Բոլդրով, զեմստվոյին բժիշկ, սոց.-դեմ. Նաումով, գիւղացի, սոց.-յեղ. բացի Մատագուտովից բոլորը ռուսներ են։

Լօձ քաղաքի կողմից—Բաբիցկի, լեհական առաջադիմական կուսակցութիւնից երդ.-հաւ. լեհ, ազգուական։

Մինչև օրս ընտրված են 485 պատգամաւորներ, որոնցից 304-ը ձախակողմեան են, որից 30-ը առաջադիմականներ, 31 աշխատաւորականներ, 4 ազգ անհամանձելի դրութեան վրա և ձեռք մեկնել իրանց սովամահ լինող քոյրերին ու եղբայրներին, որոնք օր աւուր անթարթ աչքերով սպասում են ցանկալի օգնութեան։

Աւելորդ չեմ համարում այստեղ ասել, որ գիւղը որքան էլ հացի կարիք ունենայ, նոյնչափ էլ կարիք ունի կուլտուրայի։ Ուսումնարանի և վարժապետի ծախսերը այս տարի հոգացել են Բագուանակ մի քանի Թաղլարեցիներ, որով և գիւղի աղքատ ծնողների երեխաները պիտի սովորեն ձրիաբար։ Մեր գիւղը եղած վարժապետը և իր ամուսինը բաբեխիզմ կերպով են կատարում իրանց պարտականութիւնները. բացի ուսումնական պարագմունքներից, մի քանի երիտասարդների օգնութեամբ մեր վարժապետը ձեռնամուխ է եղել մեր գիւղում գրագրաս-ընթերցարան բանալու, որից այսքան տարիներ զուրկ է եղել Վարանդայի մայրաքաղաք Մեծ-Թաղլարը։

Գրադարանից պէտք է օգտվեն գիւղացիք ձրիաբար. այդտեղից ընթերցանելու համար գիրք կը վերցնեն ձրիաբար նաև Թաղլարին կից մի երկու փոքրիկ գիւղեր՝ Ազոնը և Շեխերը, որոնք անկարող են իրանց միջոցներով գրադարան բանալ։ Ուստի խնդրում ենք, միաժամանակ թէ օտարաբնակ Թաղարեցիներից և թէ վերոյիշեալ գիւղացիներից, ամեն կերպով օգնել գրադարանի գործը ապահովելու, ուղարկելով զանազան ժողովրդական գրքեր կամ նիւթական աջակցութիւն ցոյց տալ։ Թաղլարը երկար տարիների ընթացքում քաշվել ու տանջվել է մի շարք մարդկանց ճանկերում, իր խոր տգիտութեան պատճառով։ Միակ միջոցը, գիւղացիներին այդ դրութիւնից ազատելու համար, գիտութիւնն է... Այդ լուսաւորութեան, միմիայն լուսաւորութեան միջոցով կարելի է նրանց մի ուղի ցոյց տալ և հասկացնել իրանց չարն ու բարին։

Թաղլարը օտարութեան մէջ շատ հարուստներ ունի, որոնք կարող են օգնել գիւղի ուսումնական գործը ապահով պայմանների մէջ պահելու համար։

Գրադարանի համար գրքեր և փող խնդրում ենք ուղարկել գիւղի վարժապետին այս հասցէով՝ Шушу, мануф. торг. Степану Степанянцу, յանձնել Թաղլարի վարժապետ Արամ Ալահվերդեանին։

Նուիրատուների ցուցակը ապագայում կը տպագրվի լրագրութեան մէջ։

Յով. Ղազանչեան

ՄԱՄՈՒԼ

Ներկայ Դումայի կազմը արդէն պատրաստ է և նրա ֆրակցիան, համարեա, յայտնի։ Այս անգամ աջակողմեան և ձախակողմեան ծայրահեղները համեմատաբար կրկնակի թիւով ներկայացուցիչներ ունեն Դումայում, մինչդեռ ձախ կենտրոնը, որ կազմում են կադետները, պակասել է։ Գլխաւորապէս այդ հանգամանքը պէտք է բացատրել նրանով, որ կառավարութիւնը իր խիստ ճնշումները ուղղել էր կադետների դէմ, որոնք աւելի էին ահաւոր և վտանգաւոր հակառակորդներ։

Երկրորդ Դումայի կազմը լուրջ երկիւղ է պատճառում «Բիւզ» լրագրին։ Պ. Մ. գրում է.

Անցեալ նոյեմբերին, այսինքն, յեղափոխական նոր անպղծութիւնների և չորս ամսվայ խեղաթիւրութեան ծանր փորձից յետոյ սոց.-դեմ. կօնֆերենցիան նախատեց Դումայի սոց.-դեմ պատգամաւորների գործունէութեան եղանակի վերաբերմամբ կայացրած տակտիկական որոշումները։ Առաջվայ նման նպատակ են դրել «վարկաբեկ անել Դումայի օրէնսդրական գործունէութիւնը», նրա անզօրութիւնը ապացուցանելու համար և առաջարկել ակներև անիրագործելի միջոցներ որպէսզի զրանով ընդարձակ մասսաների համակրանքը վայելեն։ Կուսակցութեան կենտրոնական կոմիտեի օրգանի ասելով «Դուման պէտք է ծառայէ իբրև ամենաբարձր լեզու հոմանի՝ ժողովրդական ոյժերի, անլեզու, յեղափոխական կազմակերպութիւնների համար, նա պէտք է օգնվի իր բոլոր օրինական իրաւունքներով և արտօնութիւններով օգնելու և նպաստելու մասսաները կազմակերպելու գործին, որով անմիջական կերպով զբաղված են յեղափոխական կուսակցութիւնները»։

Այդպէս ուրեմն, առաջին Դումայի փորձը, ինչպէս երևում է, ամենևին չէ համոզել պրօլետարիատի կուսակցութիւնը, որ նա մահափորձ է կատարում անպէտք միջոցներով։

Համարձակ և հաւատացած կերպով նա մուտք է գործում այն կախարդական շրջանը, որի սկիզբը այն վկայութիւնն է թէ՝ Դուման անզօր է, իսկ շարունակութիւնը այն «պահանջը» թէ՝ անզօր Դուման պէտք է կազմակերպէ ժողովրդական ոյժերը, և որի վերջը ներկայանում է Դումայի ըստ անզօրութեան ad oculos ցոյցը, իբրև անխուսափելի հետևանք այն համարձակ տակտիկայի, որ հիմնված է գոյութիւն չունեցող, բայց ստեղծվելիք «յեղափոխական ժողովրդի» ոյժի վրա։

Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը, նկատում է «Բիւզ» լրագիրը, Դումայում կը գնայ իր ընտրած ճանապարհով։

Աջակողմեաններից մեզ բաժանում են մեր նպատակները, ձախակողմեաններից՝ մեր գործունէութեան եղանակները։ Այդ մեր ընտրած ճանապարհով առաջ կը գնանք ինչ էլ որ լինի, մենք պարլամենտական միջոցներով կը ձգտենք իրագործել մեր ծրագրային պահանջները և յոյս ունենք, որ նոյն իսկ փոքրաթիւ քանակով, այնուամենայնիւ մենք Դումայում մեր ասելիքը կասենք։

Ներկայ Դումայի կազմը արդէն պատրաստ է և նրա ֆրակցիան, համարեա, յայտնի։ Այս անգամ աջակողմեան և ձախակողմեան ծայրահեղները համեմատաբար կրկնակի թիւով ներկայացուցիչներ ունեն Դումայում, մինչդեռ ձախ կենտրոնը, որ կազմում են կադետները, պակասել է։ Գլխաւորապէս այդ հանգամանքը պէտք է բացատրել նրանով, որ կառավարութիւնը իր խիստ ճնշումները ուղղել էր կադետների դէմ, որոնք աւելի էին ահաւոր և վտանգաւոր հակառակորդներ։

Երկրորդ Դումայի կազմը լուրջ երկիւղ է պատճառում «Բիւզ» լրագրին։ Պ. Մ. գրում է.

Անցեալ նոյեմբերին, այսինքն, յեղափոխական նոր անպղծութիւնների և չորս ամսվայ խեղաթիւրութեան ծանր փորձից յետոյ սոց.-դեմ. կօնֆերենցիան նախատեց Դումայի սոց.-դեմ պատգամաւորների գործունէութեան եղանակի վերաբերմամբ կայացրած տակտիկական որոշումները։ Առաջվայ նման նպատակ են դրել «վարկաբեկ անել Դումայի օրէնսդրական գործունէութիւնը», նրա անզօրութիւնը ապացուցանելու համար և առաջարկել ակներև անիրագործելի միջոցներ որպէսզի զրանով ընդարձակ մասսաների համակրանքը վայելեն։ Կուսակցութեան կենտրոնական կոմիտեի օրգանի ասելով «Դուման պէտք է ծառայէ իբրև ամենաբարձր լեզու հոմանի՝ ժողովրդական ոյժերի, անլեզու, յեղափոխական կազմակերպութիւնների համար, նա պէտք է օգնվի իր բոլոր օրինական իրաւունքներով և արտօնութիւններով օգնելու և նպաստելու մասսաները կազմակերպելու գործին, որով անմիջական կերպով զբաղված են յեղափոխական կուսակցութիւնները»։

Այդպէս ուրեմն, առաջին Դումայի փորձը, ինչպէս երևում է, ամենևին չէ համոզել պրօլետարիատի կուսակցութիւնը, որ նա մահափորձ է կատարում անպէտք միջոցներով։

Համարձակ և հաւատացած կերպով նա մուտք է գործում այն կախարդական շրջանը, որի սկիզբը այն վկայութիւնն է թէ՝ Դուման անզօր է, իսկ շարունակութիւնը այն «պահանջը» թէ՝ անզօր Դուման պէտք է կազմակերպէ ժողովրդական ոյժերը, և որի վերջը ներկայանում է Դումայի ըստ անզօրութեան ad oculos ցոյցը, իբրև անխուսափելի հետևանք այն համարձակ տակտիկայի, որ հիմնված է գոյութիւն չունեցող, բայց ստեղծվելիք «յեղափոխական ժողովրդի» ոյժի վրա»։

Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը, նկատում է «Բիւզ» լրագիրը, Դումայում կը գնայ իր ընտրած ճանապարհով։

Աջակողմեաններից մեզ բաժանում են մեր նպատակները, ձախակողմեաններից՝ մեր գործունէութեան եղանակները։ Այդ մեր ընտրած ճանապարհով առաջ կը գնանք ինչ էլ որ լինի, մենք պարլամենտական միջոցներով կը ձգտենք իրագործել մեր ծրագրային պահանջները և յոյս ունենք, որ նոյն իսկ փոքրաթիւ քանակով, այնուամենայնիւ մենք Դումայում

ում կը լինենք միակ կուսակցությունը, որ խիստ համաձայնեցնելով իր նպատակները իր միջոցներին, գիտէ թէ ուր է գնում նա և տանում է իր ուսերի վրա բարոյական պատասխանատուութիւնը այն բոլոր գործերի համար, որ կատարվում են ներկայացուցչական հաստատութեան մէջ, որտեղ ծայրահեղ ձախակողմեանները չեն կարող ղեկավարող և պատասխանատու դեր խաղալ հէնց այն միակ պատճառով, որ «պարլամենտական կուսակցութեան» դերը հակասում է իրանց սկզբունքներին։ Իրերի ներկայ դասաւորութեան միջոցին, ուելի քան երբեւիցէ մեզ վրա ծանրանում է դժուար պարտականութիւն անձեռնմխելի պահելու պարլամենտական կուլի արդէն գրաւված դիրքերը երկու հակասական տակտիկայի —բեսատօվրացիայի և բեսվօլիցիայի քայքայիչ հետևանքներից։

*

Այսօրվանից սկսել է լոյս տեսնել մի նոր ամենօրեայ ռուսերէն լրագիր «Кавказская Жизнь» վերնագրով, որի խմբագիր հրատարակիչն է Ի. Եա. Ֆրանչեսկի։ Առաջին համարը կազմված է ինքնքով։ Զետեղված յօդուածներից յիշենք այստեղ «հայ հասարակութիւնը և կուսակցութիւնները» յօդուածը, որտեղ յօդուածագիրը այն կարծիքն է յայտնում որ հայ ժողովրդի մէջ կայ զեկավարող երկու զգայմունք. ազգային խիստ զարգացած ինքնճանաչութիւն և տարերային դէպի բիւրօկրատա՝ այն կարգերը։ Կուսակցութիւնների աջողութիւնը և անաջողութիւնը հասկանալու համար պէտք է ուշադրութեան առնել մասնաների այդ հիմնական տրամադրութիւնը։

Այդ երկու տենդենցների վառ արտայայտիչն է հանդիսանում դաշնակցութիւնը, հայոց ազգային-դեմօկրատիան։ Դրանով է բացատրում յօդուածագիրը դաշնակցութեան տարած յաղթութիւնը ընտրութիւնների ժամանակ։ Միւս կուսակցութիւնների նկատմամբ, ասում է.

Հայ-դեմօկրատական կուսակցութիւնը նորքրա է հիմնվել և դեռ չէ կարողացել կազմակերպել մասսաները իր դրօշակի ներքոյ։

Անուսմնասիրելի հիմք կայ կարծելու, որ կազմութիւնը յայտնի ապայայ է ապասում։ Այդ կուսակցութեան ղեկավարը լիովին հասկացանում է հայերի ազգային ընտրութեանը, որը զերծ է յանդուգն և դժուարիրագործելի իդեալներից։

Սոցիալիզմի մուտքը հայ ժողովրդի մէջ բացատրվում է բազմաթիւ հանգամանքներով. արդիւնաբերական կապիտալիզմի և պրոլետարիատի թուլութեամբ, ազգայնական զգայմունքի չափազանց զարգացմամբ, սոցիալիստական քանակում խորը այծերի բացակայութեամբ, և այլն։ Այդ կուսակցութիւնների (սոցիալիստների) գործունէութեան շրջանը սահմանափակվում է երեք խոշոր քաղաքներով (Թիֆլիս, Բաքու և Բաթում)։ Գաւառները առայժմ խուլ են դէպի սոցիալիզմը։

ՋԻՒԱՆՇԻՐԻ ՆԵՐԿԱՆ

—

Առաջաձոր, 2 փետրվարի

Ժողովրդի ցաւերից, ժողովրդի կեղեքողներից և Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը։

I

Ջիւանշիրի լեռնաբնակները՝ օրինակ, Խաչէնի և Թարթառի ձորակների բնակիչները ներկայումս գտնվում են սովի ճիրաններում։ Այդ խեղճ բնակիչներին սովի տաքնապից ազատելու համար վաղօրօք փորձ ուղարկեցին, գումարները հանգանակվեցին, որոնց մասին իր ժամանակին յայտարարվեց պատուական «Մշակ» լրագրի համարների էջերում, սակայն դրանց ոչ մէկը չը ծառայեց իր բուն նպատակին...։ Խեղճ անտէր, անպաշտպան ու տգէտ ժողովուրդ. քեզ ոչ մէկը օգնող չէ հանդիսանում, ոչ մէկը քեզ բարեկամ չէ և բացի այն, որ քեզ չեն օգնում, դեռ օգտվելով քո տգիտութիւնից, քեզանից օգտվում են, հարստահարում...։ Մինչև անգամ գիւղացի չունենալը մի անգագրի համար վկայական գրողին 20 կօպէկ է վճարում, մինչդեռ վկայականը հաստատող շինական ատամուտէրին 50 կօպ.—1 բուբ. է վճարում, իսկ ինչքան ներողութիւններ է կրում նա, երբ այդ վկայականը ստանում է պրիստաւին հաստատելու համար և գաւառական կառավարութիւնը յիշեալ վկայականով անցագիր տանալու...։ Ո՞րը գրեմ, որը թողնեմ։

Անցեալ 1906 թ. զինուորագրութեան ենթարկվողներից մի քանիսը գտնվելով զանազան քաղաքներում և չը կարողանալով իր ժամանակին ներկայանալ ուր հարկն է, վճռում են ենթարկվել զինուորագրութեան Գանձակում՝ անցեալ տարիների օրինակով։ Սակայն զինուորակոչութեան համար նշանակած ժամանակից դեռ երկու շաբաթ առաջ, պրիստաւը հրամայում է հասարակութիւններին մարդիկ վարձել ու ղրկել քաղաքները՝ գտնելու ու բերելու ուր հարկն է՝ իր ծննդավայրում չը գտնվող զինուորակոչութեան ենթարկվող երիտասարդին։ Հասարակութիւնը մասների արանքով է նայում այդ հրամանին, չը կամենալով ուելորդ ծախքի տակ ցցել առանց այն էլ հոգսերով ծանրաբեռնված, քայքայված ու տառապեալ բնակիչներին, վատաս լինելով, որ սովորական կերպով, զինուորակոչութեան ենթարկվողները գիւղերում չը գտնվելով, ներկայանալու են Գանձակում պատշաճաւոր հաստատութեան։ Պրիստաւը տեսնելով, որ իր առաջարկութիւնը ուշ չէ դարձնում հասարակութիւնը, ինքը հրամայում է ժողովրդի անդամներից մէկին, միւսին ուղղորդելու քաղաքները և գտնելու ու բերելու ուր հարկն է գիւղերում չը գտնվող ու զինուորակոչութեան ենթարկվող երիտասարդներին, բայց հրամայված մարդիկը զանազան պատճառաբանութիւններով չեն հաճանվում գնալու... կամենալով այդպիսով այդ գործը անիրագործելի թողնել ու աղքատ հասարակութիւնը ուելորդ ծախքի տակ չը դցելը։ Վերջապէս պրիստաւը բարկանալով հասարակութեան վրա, տալիս է գիւղերում չը գտնվող զինուորագրութեան ենթարկվող երիտասարդների ցուցակը։ Առաջաձորում ապրող Ղայբալին-Շինացի (Շուշու գաւառ), Մելիք-Մուսայէլեանցին (որը կերակուրներ էր պատրաստում պրիստաւի համար, վերջինիս Առաջաձոր եկած դէպքում) և առաջարկում նրան, որ նա գնալով Բաքու քաղաքը, գտնէ ու բերէ Գանձակ՝ միայն Բաքուում եղողներին, համաձայն վերջինիս ծնողների ներկայացրած հասցէների և այդ ասելով պրիստաւը խոստանում է Մ. Մուսայէլեանցին Առաջաձորի նման աղքատ հասարակութիւնից պահանջել 80 բուբ. և տալ նրան, ինչպէս վարձ։ (Պրիստաւը այսպիսով կամենում էր պատճել ժողովրդին)։

Մելիք-Մուսայէլեանցը մեծ ուրախութեամբ համաձայնվելով, գնում է Բաքու, բայց ոչ մի երիտասարդի չի գտնում, որովհետև բոլորը ճանապարհված են լինում Գանձակ, ենթարկվելու զինուորագրութեան, անցեալ տարիների օրինակով։

Մելիք-Մուսայէլեանցը յետ դառնալով գիւղը, ներկայանում է պրիստաւին և յայտնում, որ իրը թէ ինքը իր աշխատութիւններով բոլոր զինուորագրութեան ենթարկվող երիտասարդներին գտել ու բերել է Գանձակ ու ներկայացրել ուր հարկն է։ Պրիստաւը նրան «молодецъ» ասելուց յետոյ, հրաման է գրում Առաջաձորի հասարակութեան ատամուտէրին՝ հաւաքելու զինուորագրութեանը ուղարկած երիտասարդների ծնողներից 80 բուբլի և տալու այդ գումարը Մելիքին։ Տանուտէրը ու աղքատ ժողովուրդը խնդրում են Մելիքին՝ բաւականանալու 40 բուբլով, ուելացնելով որ նա գործից ընկել է միայն 7—8 օր և ուրեմն 40 բուբլին բաւական է նրան, ինչպէս վարձ։ Սակայն Մելիքը չի համաձայնվում ու սպառնալիքներ է կարդում՝ թէ կը դիմէ նորից պրիստաւին, գաւառապետին և այլն։ Եւ խաղէս Մելիքը մի քանի անգամ պրիստաւին գանգատվելուց յետոյ, հասնում է իր գարշելի նպատակին, ստանալով աղքատ ու տառապեալ բնակիչներից 80 բուբլի փող, ինչպէս 7—8 օրվա վարձ և ինչ արած ծառայութեան համար։ Եւ այդպիսով Մելիքը ապրելով 300 տուն առաջաձորցիների մէջ, ժամների ծայրերին խաղացնում է ոչ միայն 300 տուն բնակիչներին, այլ Խաչէնի ձորակի 7—9 գիւղերի ժողովրդին։ Ոչ մէկը չի կարողանում, վախենում է հակաճառել Մելիքին։ Ուրեմն, այդ ձորակի ժողովուրդը ոչ թէ մարդկերանցից է բաղկացած, այլ «անասուններից»։ Գիւղերում չը գտնվող՝ զինուորակոչութեան ենթարկվողների ծնողները բացի Մելիքին 80 բուբլու տալուց, 3-ական բուբլի էլ մէկ են տալիս տանուտէրին՝ քաղաքների պօլիցիային հեռագրելու համար, զինուորագրութեան ենթարկվող երիտասարդներին հայրենիք ուղարկելու։

Դէ, ապրի դու, տառապեալ ժողովուրդ։ Դու օր չես տեսնելու, քանի քո մէջ բուն են դրած Մելիքները։

II

Մեր գաւառի լեռնաբնակները ապրուստ հայթայթելու հնար չը գիտեն։ Նրանց՝ այդ անճարներին, ճանապարհ ցոյց տուող չը կայ, բացի պանդխտելուց։ Բաքու գնացողները յետ են դառնում, ասելով որ գործ չը կայ։ Նպատամատոյց Ցանձնամոդովի ու Կուլտուրական Միութեան մարդկանց՝ աղքատներին խոստացած նպաստը (ալիւր և ցորենը) նշանակած ժամանակին և մինչև այսր չստացվեց։ Ժողովուրդը գտնվում է սովի տաքնապի ճիրաններում ու յուսահատ դրութեան մէջ...։ Պէտք է օգնել նրան...։ Ժողովրդի կացարանը խոնաւ է, նա մերկ է, նա քաղցած է։ Այդ երրորդութիւնը մեծ չարիք է ժողովրդի համար։ Այդ է պատճառը, որ գաւառում երևան են եկել զանազան հիւանդութիւններ. «տիֆը» (брюшной тифъ) և ուրիշ անանուն հիւանդութիւններ, մեծերի և փոքրերի։ Այդ չարիքներից մեծ թիվ զոհեր առաջ գալը անխուսափելի է...։

III

Յունվարի 25-ին Թարթառ-աւանում Պետական Դումայի համար՝ Ջիւանշիրից գաւառական լիազօրներ ընտրվեցին՝ երկու հայ և մի թուրք, սակայն անցեալ տարի բոլոր երեքին թուրքերից էին ընտրել, պատճառաբանելով, որ հայերը Ջիւանշիրում քիչ տոկոս լինելու համար, նրանցից չէ հաստատ ընտրելու գոնէ մի անձնաւորութիւն։

Քուէարկութիւնից յետոյ թուրքերը յայտնում են, որ իրանք անբաւական են այդ ընտրութիւնից, որովհետև ըստ իրանց, ընտրվածներից երկուսը պէտք է թուրքեր լինեն, իսկ մէկը հայ։ Սակայն ընտրութիւններ կատարող Ջիւանշիրի հաշտարար գաւառը յայտնում է թէ՝ որովհետև բոլոր թուրք լիազօրները չեն ներկայացել, ուստի համաձայն տեղադրված լիազօրների թվի, ընտրութիւնը պէտք է լինի այնպէս, ինչպէս կատարվել է։ Թուրքերը անբաւական հեռանում են։

Բ. Զ.

P. S. Մոռացայ գրել, որ հայ լիազօրները, մի քանի կողմեակի անձանց խորհուրդի համաձայն, գաւառական լիազօրներ ընտրելու համար, ձայն են տալիս, որ ի մէջի այլոց նշանակելի և պ. Լևոն Աթաբէկեանը, պատճառաբանելով, որ իրանց մէջ չը կան գոնէ տարրական կրթութիւն ստացածներ, որոնք կարողանային ժողովրդի ներկայացուցիչներ լինել։ Սակայն պ. հաշտարար գաւառը չէ համաձայնվում, ասելով, որ պէտք է ընտրված մարդկերանցից լինի գաւառական լիազօր ընտրվողը, իսկ պ. Լևոն Աթաբէկեանը չէ ընտրված։

Բ. Զ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԴԻՒՆՔԸ

—

Առաջիկայ Դումայի կազմը բոլորովին պարզված կարելի է համարել։ Պետական Դումայի 524 անդամներից արդէն ընտրվել են 423 հոգի, այդպիսով լինելիք լրացուցիչ ընտրութիւնները այնքան էլ էական փոփոխութիւններ չեն կարող մտցնել կազմի մէջ։ Օպոզիցիան, այսինքն, սահմանադիր ռամկավարները և այն բոլոր կուսակցութիւններն ու խմբակները, որոնք կանգնած են Նրանցից ձախ, արդէն զբաղեցրել են 266 տեղեր և բացի դրանից նրանց համար արդէն ապահովված է 7 լիազօրութիւն։ Պետերբուրգի և Նիժնի-Նովգորոդի կողմից։

Այդպիսով եթէ նոյնիսկ թոյլ ասենք, որ մնացեալ ընտրութիւնները բոլորն էլ կը տան միայն աջակողմեանների և եթէ մենք կատարութեան կուսակից համարենք այն բոլոր կասկածելի տարրերին—չափաւորներին, անկուսակցականներին, անյայտներին և լեհական ազգայիններին, այնուամենայնիւ օպոզիցիան ամենավատթար պայմաններում կուռ է՝ իր ծննդավայրում չը գտնվող զինուորակոչութեան ենթարկվող երիտասարդներին։ Հասարակութիւնը մասների արանքով է նայում այդ հրամանին, չը կամենալով ուելորդ ծախքի տակ ցցել առանց այն էլ հոգսերով ծանրաբեռնված, քայքայված ու տառապեալ բնակիչներին, վատաս լինելով, որ սովորական կերպով, զինուորակոչութեան ենթարկվողները գիւղերում չը գտնվելով, ներկայանալու են Գանձակում պատշաճաւոր հաստատութեան։ Պրիստաւը տեսնելով, որ իր առաջարկութիւնը ուշ չէ դարձնում հասարակութիւնը, ինքը հրամայում է ժողովրդի անդամներից մէկին, միւսին ուղղորդելու քաղաքները և գտնելու ու բերելու ուր հարկն է գիւղերում չը գտնվող ու զինուորակոչութեան ենթարկվող երիտասարդներին, բայց հրամայված մարդիկը զանազան պատճառաբանութիւններով չեն հաճանվում գնալու... կամենալով այդպիսով այդ գործը անիրագործելի թողնել ու աղքատ հասարակութիւնը ուելորդ ծախքի տակ չը դցելը։ Վերջապէս պրիստաւը բարկանալով հասարակութեան վրա, տալիս է գիւղերում չը գտնվող զինուորագրութեան ենթարկվող երիտասարդների ցուցակը։ Առաջաձորում ապրող Ղայբալին-Շինացի (Շուշու գաւառ), Մելիք-Մուսայէլեանցին (որը կերակուրներ էր պատրաստում պրիստաւի համար, վերջինիս Առաջաձոր եկած դէպքում) և առաջարկում նրան, որ նա գնալով Բաքու քաղաքը, գտնէ ու բերէ Գանձակ՝ միայն Բաքուում եղողներին, համաձայն վերջինիս ծնողների ներկայացրած հասցէների և այդ ասելով պրիստաւը խոստանում է Մ. Մուսայէլեանցին Առաջաձորի նման աղքատ հասարակութիւնից պահանջել 80 բուբ. և տալ նրան, ինչպէս վարձ։ (Պրիստաւը այսպիսով կամենում էր պատճել ժողովրդին)։

Մելիք-Մուսայէլեանցը մեծ ուրախութեամբ համաձայնվելով, գնում է Բաքու, բայց ոչ մի երիտասարդի չի գտնում, որովհետև բոլորը ճանապարհված են լինում Գանձակ, ենթարկվելու զինուորագրութեան, անցեալ տարիների օրինակով։

Մելիք-Մուսայէլեանցը յետ դառնալով գիւղը, ներկայանում է պրիստաւին և յայտնում, որ իրը թէ ինքը իր աշխատութիւններով բոլոր զինուորագրութեան ենթարկվող երիտասարդներին գտել ու բերել է Գանձակ ու ներկայացրել ուր հարկն է։ Պրիստաւը նրան «молодецъ» ասելուց յետոյ, հրաման է գրում Առաջաձորի հասարակութեան ատամուտէրին՝ հաւաքելու զինուորագրութեանը ուղարկած երիտասարդների ծնողներից 80 բուբլի և տալու այդ գումարը Մելիքին։ Տանուտէրը ու աղքատ ժողովուրդը խնդրում են Մելիքին՝ բաւականանալու 40 բուբլով, ուելացնելով որ նա գործից ընկել է միայն 7—8 օր և ուրեմն 40 բուբլին բաւական է նրան, ինչպէս վարձ։ Սակայն Մելիքը չի համաձայնվում ու սպառնալիքներ է կարդում՝ թէ կը դիմէ նորից պրիստաւին, գաւառապետին և այլն։ Եւ խաղէս Մելիքը մի քանի անգամ պրիստաւին գանգատվելուց յետոյ, հասնում է իր գարշելի նպատակին, ստանալով աղքատ ու տառապեալ բնակիչներից 80 բուբլի փող, ինչպէս 7—8 օրվա վարձ և ինչ արած ծառայութեան համար։ Եւ այդպիսով Մելիքը ապրելով 300 տուն առաջաձորցիների մէջ, ժամների ծայրերին խաղացնում է ոչ միայն 300 տուն բնակիչներին, այլ Խաչէնի ձորակի 7—9 գիւղերի ժողովրդին։ Ոչ մէկը չի կարողանում, վախենում է հակաճառել Մելիքին։ Ուրեմն, այդ ձորակի ժողովուրդը ոչ թէ մարդկերանցից է բաղկացած, այլ «անասուններից»։ Գիւղերում չը գտնվող՝ զինուորակոչութեան ենթարկվողների ծնողները բացի Մելիքին 80 բուբլու տալուց, 3-ական բուբլի էլ մէկ են տալիս տանուտէրին՝ քաղաքների պօլիցիային հեռագրելու համար, զինուորագրութեան ենթարկվող երիտասարդներին հայրենիք ուղարկելու։

Դէ, ապրի դու, տառապեալ ժողովուրդ։ Դու օր չես տեսնելու, քանի քո մէջ բուն են դրած Մելիքները։

II

Մեր գաւառի լեռնաբնակները ապրուստ հայթայթելու հնար չը գիտեն։ Նրանց՝ այդ անճարներին, ճանապարհ ցոյց տուող չը կայ, բացի պանդխտելուց։ Բաքու գնացողները յետ են դառնում, ասելով որ գործ չը կայ։ Նպատամատոյց Ցանձնամոդովի ու Կուլտուրական Միութեան մարդկանց՝ աղքատներին խոստացած Նպաստը (ալիւր և ցորենը) նշանակած ժամանակին և մինչև այսր չստացվեց։ Ժողովուրդը գտնվում է սովի տաքնապի ճիրաններում ու յուսահատ դրութեան մէջ...։ Պէտք է օգնել նրան...։ Ժողովրդի կացարանը խոնաւ է, նա մերկ է, նա քաղցած է։ Այդ երրորդութիւնը մեծ չարիք է ժողովրդի համար։ Այդ է պատճառը, որ գաւառում երևան են եկել զանազան հիւանդութիւններ. «տիֆը» (брюшной тифъ) և ուրիշ անանուն հիւանդութիւններ, մեծերի և փոքրերի։ Այդ չարիքներից մեծ թիվ զոհեր առաջ գալը անխուսափելի է...։

III

Յունվարի 25-ին Թարթառ-աւանում Պետական Դումայի համար՝ Ջիւանշիրից գաւառական լիազօրներ ընտրվեցին՝ երկու հայ և մի թուրք, սակայն անցեալ տարի բոլոր երեքին թուրքերից էին ընտրել, պատճառաբանելով, որ հայերը Ջիւանշիրում քիչ տոկոս լինելու համար, նրանցից չէ հաստատ ընտրելու գոնէ մի անձնաւորութիւն։

Քուէարկութիւնից յետոյ թուրքերը յայտնում են, որ իրանք անբաւական են այդ ընտրութիւնից, որովհետև ըստ իրանց, ընտրվածներից երկուսը պէտք է թուրքեր լինեն, իսկ մէկը հայ։ Սակայն ընտրութիւններ կատարող Ջիւանշիրի հաշտարար գաւառը յայտնում է թէ՝ որովհետև բոլոր թուրք լիազօրները չեն ներկայացել, ուստի համաձայն տեղադրված լիազօրների թվի, ընտրութիւնը պէտք է լինի այնպէս, ինչպէս կատարվել է։ Թուրքերը անբաւական հեռանում են։

Բ. Զ.

ԿԱՌԱՎԱՐԶԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

—

Մասնաւոր կառավարութիւնների տուած բոլոր խնդիրները երկաթուղային նոր գծեր շինելու մասին, այժմ հաւաքված են և մի առանձին գործ են կազմում, որը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը պէտք է յանձնի Պետական Դումայի հայեցողութեան։

—Պետական խորհրդի նիստերին մասնակցելու են նրա անդամներ՝ կոմս Վիտտէն, Դուրնովօն, Գորեմիկինը, Բուլիգինը և գեներալ-ադիւտանտ Դուբասովը։

—Պետական Խորհրդի կենտրոնի խմբակը առաջիկայում համագումար է ունենալու, որտեղ մտադրութիւն կայ քննելու այն հարցը, թէ խորհուրդը ինչ դիրք պէտք է բռնի Դումայի վերաբերմամբ, մինչև ժամանակ և խորհրդի նախաձեռնութեան իրաւունքը։

—Փետրվարի 8-ին Ներքին գործերի մինիստրութեան մէջ սկսվել են յատուկ կազմված մասնաժողովի նիստերը՝ քանաքերում և կալանաւորութեան տներում գործադրուելու դէմ պատժողական միջոցներ մշակելու համար։ Մասնաժողովին ներկայացված է բանտային գլխաւոր վարչութեան կառավարչի կազմած նախագիծը, որի համաձայն գործադրուելու կազմակերպելու գործում մեղադրվող կալանաւորները ենթարկվում են պատժի 3—12 ամիս բանտարկութեամբ։

—Լատտեկակ շրջանների խօսում են, որ կենտրոնական զինուորական վարչութեան վերակազմութեան ծրագիրը մշակվում է մեծ գաղտնապահութեամբ, բայց լրված հանգամանքով Մոսկվայի գեներալների շարքի հրամանատարին սաստրդել զինուորական մինիստրին, ինքնուրոյնութիւն վերապահելով մինիստրի օգնականին տնտեսական հարցերում։ Զինուորական մինիստրը հանդիսանալու է լոկ միացնող օղակ այդ երկու ճիւղերի և ունենալու է բացառիկ իրաւունք անձամբ ամենաստակ զեկուցում ներկայացնելու։

(«Таваришъ»)

—Պետերբուրգի մի քանի շրջաններում քննվում է այն հարցը, թէ ինչ պայմաններով արձակել Պետական Դուման, եթէ որ նա անհաշտ ներկայանայ։ Ի մէջի այլոց մտադրութիւն կայ իբրև պատուար, իբրև շիրմա առաջ քաշել Պետական Խորհուրդը։ Պետական Խորհրդի մը քանի անդամների մէջ միաք է յղացել Պետական Խորհրդի անունից դիմումներ անել Թագաւորին յայտնելու, որ երկրորդ աշխատանքի անընդունակ՝ Դուման կանգնեցնում է երկրի ամբողջ օրէնսդրական գործունէութիւնը։ Բարենորոգումների և բիւջետ հաստատելու անհրաժեշտութիւնը այդ տեսակ արտակարգ հանգամանքներում արդարացուցիչ կը դարձնէր այնպէսի բացառիկ միջոցներ ինչպիսին է Պետական Խորհրդի գործունէութեան շարունակութիւնը Պետական Դումայի արձակումից յետոյ։ Պետական Խորհուրդը այդպիսով կարող կը լինէր անհրաժեշտ բարեռորոգումները մտցնել և բիւջետը հաստատել։

(«Новъ»)

ԲԱՆԵՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—

Մօտ ժամանակներս Վիտեբսկում տպարանական գործի բանւորների դաշնակցութեան միջոցով տեղական մի քանի տպարաններում բանւորների համար մտցված են նոր բարեփոխութիւններ. սահմանված է 8 ժամվայ աշխատանքի օր (առանց հաշվելու $1^1/_2$ ժամ ընդմիջումը ճաշելու համար), հիւանդութեան դէպքում 2 ամսվայ ռոճիկը վճարվում է նախապէս, և մի քանի ուրիշ թեթև պայմաններ։ Բոլոր տպարանատէրերը (բացի նահանգական տպարանից) համաձայնվել են մտցնելու այդ նոր փոփոխութիւնները։ («Т.-П.-Г.»)

—Որքան մօտենում է Դումայի գումարման օրը, այնքան բանւորական պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների գործունէութիւնը աւելի ու աւելի է աշխուժանում։ Առաջին հերթում ներկայումս զրված է տեղական կազմակերպութիւնների միաբանութիւնների հարցը։ Պրոֆեսիոնալ դաշնակցութիւնների համագումարներն ու կոնֆերենցիաները տեղի կունենան Դումայի գումարման ժամանակ։ Թէ այդ միացման պրոցեսը օրչափ տարածված է բանւորական մասսաների մէջ, կարելի է տեսնել մօտ ժամանակներս կայացած, ներկայումս տեղի ունեցող և մօտ օրերս կայանալիք կոնֆերենցիաներից, որոնց ցուցակը սարսափելի յիշում ենք։ Այդ կոնֆերենցիաները հետևեալներն են. 1) շինութիւնների վրա աշխատող բանւորների դաշնակցութեան համառուսական կոնֆերենցիան, 2) տպագրական գործի բանւորների դաշնակցութեան համառուսական կոնֆերենցիան, 3) բանւոր դերձակների համառուսական կոնֆերենցիան, 4) Մոսկվայի շրջանի բոլոր դաշնակցութիւնների կոնֆերենցիան, Մոսկվայի բայօնի շրջանային կոնֆերենցիան, 5) մետալդիչում աշխատող բանւորների, 6) տեկստային բանւորների, 7) Թօխի հոլտի դաշնակցութիւնների կոնֆերենցիան, 8) տպագրական գործի բանւորների շուրջ-գլուխ շրջանային կոնֆերենցիան, 9) բոլոր պրոֆեսիոնալների, դաշնակցութիւնների հարաւային բայօնական կոնֆերենցիան և 10) լեհական դաշնակցութիւնների համագումարը։ Ինչպէս երևում է, մենք գործ ունենք ոչ թէ այս կամ այն պրոֆեսիայի պատասխանական համագումարի հետ, այլ մի ամբողջ դասակարգային համախմբումի պրոցեսի հետ, որը, օրգանապէս զարգանալով, ձգտում է բաժանումներից դէպի կենտրոնը։ Միացման յաջորդ քայլը հանդիսանում է ներկայումս կազմակերպվող բոլոր պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների համագումարը, որին վիճակված է միացնել տեղական բոլոր պրոֆեսիոնալ կազմակերպութիւնները։ Այդ համագումարների և կոնֆերենցիաների գլխաւոր կազմակերպչական նպատակը, ինչպէս այդ նկատվում է կազմվող «օրակարգերից», պէտք է լինի ստեղծել շրջանային և համառուսական կենտրոններ իւրաքանչիւր պրոֆեսիայի համար առանձին և բոլորի համար միասին։ Կոնֆերենցիաներում քննվելիք հարցերից մենք կը մատանշենք ոչ այնքան կարևորները. Պետական Դումայի, բանւորական հարցի վերաբերմամբ կառավարութեան մշակած օրինագծերի, քաղաքային դումաների, լոկաուտների, կոլեկտիվ պայմանագրերի մասին և այլն։

—Պրոֆեսիոնալ դաշնակցութիւնների համագումար հրաւիրելու համար կազմված մասնաժողովը հարցական թերթիկներ է ուղարկել բոլոր պրոֆեսիոնալ կազմակերպութիւններին՝ դաշնակցութիւնների դրութեան և գործունէութեան մասին։

—Մօտ օրերս կայացել է Մոսկվայի արդիւնաբերական շրջանի մետաղդէղնի մասերում աշխատող բանւորների կոնֆերենցիան, Ռուսատանի ծայրագաւառների և շրջանների ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Կոնֆերենցիան ունկնդիր է 9 նիստում։ Այդ նիստերում ի մէջի այլոց որոշված է ցոյկաթի ենթարկել այն պատուէրները, որոնք Կոլչակից ստացվում են կենտրոնում, անկախան գործարանների համար։

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՄ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

(Նամակ խմբագրութեան)

II

Այս թղթում մեղադրում են ինձ, որ ես վիրաւորել եմ երկու ուսուցչի, պ. պ. Վահան պետեանին և Ալթունեանին և մեղադրում եմ նրանց։

Ասացէք, խնդրում, ինչ մեղադրական—վիրաւորական բան կայ, երբ ես ասում եմ թէ պ. Ալթունեանը հայերէնը վատ է դաս տալիս. Տէր Թօդրեան եմ անուանել նրա մի թեզը, որովհետև նա լիքը է աւանդում կարգապատիզը առանձին ժամերում. քերականութիւնը առանձին. ինչ միաք ունի քերականութիւնը, երբ անցնում են առանց տեղը ցոյց տալու և կարդացածի վրա. այդ դէպքում աւելի լաւ է չանցնել քերականութիւնը. յետոյ պ. Ալթունեանը բանտատում է աշակերտներին մի ասացուածի մէջ, մի վերջակետով դուրս բերել բոլոր ման բաները, որից այնպիսի սխալներ են անում փոքրերը, որոնք ուսուցչին քաջ յայտնի են. իսկ տեսչի կողմից ոչ մի հետաքրքրութիւն։ Վերցրէք փոքրերի գրաւորների տետրակները—օ, Աստուած իմ, կարծէք թէ իսկի ուսուցչի ձեռքով չէ անցել։ մի քանի տող թղթած, իսկ բաց են թողնված այնպիսի սխալներ, այնպիսի սոսկալի սխալներ, որոնք ամօթ են բերում ուսուցչին։ Ուսուցիչը տարակուսէ. «անուշադրութիւնից է», թող այդպէս լինի. բայց այդ մի՞թէ մի հատ է, երկու է... անվերջ. ինչէ է պէտք այդպիսի ուսուցիչը. այս բանի վրա ես իրաւունք չունեմ մատնանշելու, և ասացէք խնդրեմ, ինչ մեղադրական բան կայ այստեղ։ Դուք, Մեսրոպ վարդապետ և մանկավարժական կոչեցեալ ժողով, ինքը կանչեցիք ինձ իմ ասածն ապացուցելու։

Մեղադրում են ինձ, որ պ. Ալթունեանի առանդած բնախօսութիւնը «ողորմելի» եմ անուանել. պատասխանեցէք, պարոնայք, ինքը վերցրիք դուք այդ տետրակները կարդալու, կամ կանչեցիք ինձ բացատրութեան։

Մեղադրում են ինձ, որ պ. Վահանեանի մասին ասել եմ վերոյիշեալը։—դարձեալ հարցնում եմ. պ. պ. Մեսրոպ և ուսուցիչներ.—քանեցիք այդ, թէ բաւականացաք պ. Վահանեանի «զբաղարութիւն է» ով։ Ո՞վ կուրանայ այն, պարոններ, որ այդ երկանութիւն է. ինչպէս պիտի քննէք դուք այդ, եթէ ոչ հարցնելով դասատուին դրից. բայց դուք բաւականացաք միայն պ. Վահանեանին հարցնելով։ Ասացէք խնդրեմ, այս բոլորի մէջ ինչ վիրաւորական բան կայ, ինչն է դրպարութիւն. դուք պիտի եղրակացութիւնն հանէք քննութիւնից յետոյ միայն, բայց...

Ոչինչ, այդ էլ կը պարզեմ թէ ինչու։

Այժմ դառնանք երկրորդ կէտին.—վերակացուներից մէկին պրօվօկասիօն եմ անուանել և այդ համարվում է զրպարտութիւն։

Իմ թուղթը ներկայացնելուց մի երկու օր յետոյ տեսուչը կանչում է ինձ իր մօտ և բարեկամի դիմակով սկսում է խօսել հետս. երբ ես ի միջի այլոց ասացի նրան, որ վերակացու Զ.-ն այսպիսի մի բան է արել,—«Հա, իմարկէ, յամենայն դէպս ես այդ չը գիտէի, ինչու՞ շատ չէիք ասում, շատ վատ բան է արեր... և պրօվօկասիօ անուանելուս մէջ միանգամայն մեղաւոր ինձ հետ։

Այս խօսակցութիւնը ոտներին էր և պ. Զ.-ն այնտեղ չէր։ Երբ վերադարձաւ, տեսուչը յայտնեց նրան այս. և անա մի օր պ. Զ.-ն կանչում է ինձ և որպէս թէ ոչինչ չը գիտէ.—«Դուք զանգատվել էք իմ պարապմունքի (դասատանդութեան) դէմ», հարցնում է ինձ։

—«Ոչ», և ես կրկնեցի նոյնը, ինչ որ տեսչին էի ասել, անուանելով այդ վարմունքը պրօվօկացիա և հրաւիրեցի նրան, որ լսէ իմ բացատրութիւնը ուշադրութեան ընդհանուր ժողովում կամ ինչպես ինքը կուզէ. բայց մեր քաջ Զ.-ն—«Ես գործ չունեմ այդ դատերի հետ, ինչ ուզում էք արէք, ես այստեղ եմ»—պատասխանեց.—փախուստը պարզ էր. ես տեսացոյ նրանից, ասելով, որ ես իմ խօսքերի տէրն եմ և եթէ պարոնը իրան վիրաւորված է զգում, թող պատիւ պահանջի և բացատրութիւն ուզի, ես միշտ պատրաստ եմ և կապացուցեմ իմ ասածները։

Անցաւ երկար ժամանակ, և պ. Զ.-ն հանդիպա է, ոչ մի ձայն չէ հանում, միայն մանկ. ժողովում ասում է, որ ես զրպարտել եմ իրան։

Երբ ժողովի արձանագրութիւնը առաջին անգամ կարդացին ինձ, ես զրոյված բողոքեցի այդպիսի վեճի դէմ, ինչու՞ ինձ չեն կանչել քննութեան, ինչու՞ ինձանից բացատրութիւն չեն ուզել և հաւատացել են որևէ Զ.-ի. որովհետև նա վերակացու է, ես աշակերտ? Նորից եմ հարցնում, մանկավարժական ժողով, ինչու՞, ինչ բարոյական իրաւունքներով դուք հաւատացիք Զ.-ին և չը հաւատացիք ինձ, մանաւանդ որ ես պատասխանատուութիւն յայտնեցի բացատրութիւն տալու. ոչ, պարոններ, այդպիսի խնդրում վերակացուի և աշակերտի հարց չը պիտի լինէր, ով մեկուսը էր, նա պիտի պատժվէր. մանկավարժական ժողովը դիւրաղաշտային դատարան չէ, որ առանց քննութեան վճիռ տայ, թէև այս վերջինս էլ մի ձևական քննութիւն անում է։ Մանկավարժական ժողովը միշտ պիտի զեկավարվի արդարութեան սկզբունքներով և չը տարվի թիֆլիսյանութեամբ և կուրութեամբ։ Դուք սրա-նրա «խաթրիչիչն» ամեն բան արիք. ապացոյցը հենց վերոյիշեալները, և դուք ձեր այդ վարմունքով պատասխանատու էք հասարակութեան առաջ։

Երրորդ և չորրորդ կէտերի մեղադրանքը, որ մենք տարել ենք Դ. դասարանցիներից մի քանիսին մեր լսարանը ազօթքից յետոյ և մեզ տեսել են միասին շրջելիս—միանգամայն ծիծաղելի է. նախ՝ ինչու՞ մենք ենք տարել նրանց մեր լսարան. այդ էլ ձեր հետևակայութեան արդիւնքն է. դուք հարցրիք այդ մի քանիսին և խմացաք, որ մենք ենք տարել լսարան. այդ էլ չը քնեցիք, այդ մի քանի հոգին, այն, շարունակ

կարող էին նորից անհաթութիւններ առաջ գալ։ Թէև գրուածանց առիթ տուող տարաձայնութիւնը հարիւր թէ որքէ հետևանք ունենայ, բայց և այնպէս պարտք համարեցի հարցրդելու այն, ինչ որ կայ։

Վերջին ընտրութիւնների, այսինքն 16 ընտրվածների մի պատգամաւոր ընտրելու ժամանակ, գործը այնպէս է գնում, որ ամենից շատ ընտրող ձայն ունեցողներ լինում են երկու հոգի և երկուսի ձայներն էլ լինում են հաւասար քանակութեամբ՝ այն է իշխ. Շարվաշիձէն 7 ձայն ընտրող, 8 ձայն—ոչ ընտրող և կ. կանդալակին նոյնպէս 7 ձայն ընտրող, 8 ձայն—ոչ ընտրող։ Ընտրութեան վերջնական լուծում տալու համար վիճակ են գցում և, ինչպէս ասում են, բախտ, թէ ճակատագրի տնօրինութեամբ, վիճակն ընկնում է Կանդալակին, որով և վերջ է տրվում ընտրութեան և այդպէս էլ հրատարակվում հրապարակով։ Կանդալակին սկսում է հարկ եղած վկայագիրը ձեռք բերել և պատրաստութիւններ տեսնել մեկնելու Պետերբուրգ (որքան լսեցի նա արդէն գնացել է Թիֆլիս այնտեղի պատգամաւորների հետ միասին գնալու Պետերբուրգ)։ Եւ ահա յանկարծ սկսվում է յամառյուկ պտտել քաղաքում, թէ իշխան Շարվաշիձէն հեռագիր է ուղարկել Սաղլիպինի անունով, որով բողոքում է ընտրութիւնների անհանոն լինելու դէմ և առաջարկում է բեկանել հինը և նոր ընտրութիւն նշանակել։ Որքան լսեցի, իշխ. Շարվաշիձէն նոյն բողոքով նախ դիմել է տեղիս նահանգապետին, բայց մերժում է ստացել նրանից։ Իշխանը իր բողոքը պատճառաբանում է նրանով, ինչպէս լսեցի, որ ընտրողներից (կարծեմ Արդուինի) մէկը ներկայ չէ եղել և դրա պատճառը իշխանութիւնն է, որովհետև իր ժամանակին իմաց չէ տուել նրան ընտրութեան օրվայ մասին։ Իսկ նահանգապետը, ինչպէս խօսում են, մերժել է իշ. Շարվաշիձէի բողոքը այն հիման վրա, որ նա այդ անում է վիճակ ցցելուց յետոյ։ Եթէ այդ հարցը իսկապէս լուրջ բնաւորութիւն ընդունի, երևի նրա լուծումը կը մնայ աւելի Պետական Դումային, քան թէ մի ուրիշին։

—

Երկ երեկոյեան թոքերի բորբոքումից վախճանվեց այսպես ասած ընկնող և բաւական համակրութիւն վայելող բժիշկ Էլէր։ Տարօրինակ բախտ ունի մեր քաղաքը լաւ բժիշկներ ունենալու վերաբերմամբ։ Նախ շատ հաղուագիւտ են նրանք մեզ մօտ և երկրորդն էլ կարճատև է լինում նրանց գոյութիւնը այստեղ։—մահ, կամ հեռացում։ Որքան և անյարմար լինէր խնդրին մասնաւոր ձև տալը, բայց և այնպէս, այնպիսի տեղերի համար, ինչպէս Բաքուն է, որի բնակչութեան համարեա 3/4 մասը բաղկանում է աղքատ և չքաւոր ընտանիքներից և հետևապէս էլ մի քիչ դժուար ըմբռնող բժշկականութեան նշանակութիւնը, անհրաժեշտ են լաւ մարդ և լաւ բժիշկներ։ Մանաւանդ այս ձմեռ սոսկալի չափով տարածված են զանազան տարափոխիկ հիւանդութիւններ. օրինակ հարիւր թէ մի մարդ ազատ մնացած լինի ինֆլուէնցա հիւանդութիւնից, և ապա նրանից յետոյ նոյնպէս բաւական տարածված է—սկարլատինան, ծաղիկը, տիֆը և այլն (վերջինս մեծ մասամբ առաջ է գալիս ինֆլուէնցայով հիւանդներին անզգոյշ պահելուց—մրսեցնելուց)։ Գրածներս հաստատելու համար բաւական է ասել, որ վերջին ժամանակներս դեղատներում մեծ մասամբ 2—3 ժամ են մէջից նշանակում դեղեր պատրաստելու համար։

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

—

2 փետրվարի

Ի նկատի ունենալով, որ փասատերի խեղաթիւրումն ու թիւրիմացութիւնները, մի որևէ խնդրի վերաբերմամբ վերանում են միմիայն, երբ այդ խնդիրը մուտք է գործում մամուլի սիւնակներում, ընդունելով համամասնաբար աւելի ճշգրիտ իրականութիւնը մարմնացնող բնոյթ, ես գալիս եմ խնդրել Ձեզ յարգելի խմբագիր, որ ներքևում ամփոփվածը չը նայած նրա լրջութեան, մինչև այժմս կասկածելի ենթակայ խնդիրս, ի լոյս հանէք ձեր յարգելի թերթում, որը, ի դէպ է ասել, վայելում է, իր կոչման համապատասխան, նամանաւանդ իր վերջին ամիսների գործունէութեան ապացոյցներով, ամբողջ հայութեան անխտրօրէն ցաւերին ու ձգտումներին հաւատարիմ թարգմանը հանդիսանալու պատիւը։

Իմ խօսքը պիտի լինի Արդուինում Հայ-կաթոլիկների և Հայ լուսաւորչականների մի մասի մէջ առաջացած երկպառակութեան շուրջը, որ օր օրի, աւելի պրոգրեսիւ ընոյթ ու սպառնալից գոյն է ստանում, անսպասելիզմի սնաստուեր ու մոլորեցուցիչ թեների տակ։

Գարդ հասկանալի կը դառնայ խնդրի այս ընաւորութիւնը, երբ մի բօսկ մենք ուշադրութեան առնենք Արդուինի հասարակութեան մասը ու կուլտուրական զարգացումը, որ կանգնած է ամենացածր աստիճանների վրա, և հետևաբար շատ բնական է, որ այս օրինակ մասսաների մէջ երկպառակութիւնը զարգանայ, տարաբնոյթ ու սպառնալից դառնայ, քանի որ իրան խթան ունի կործանիչ անտագոնիզմը, իսկ մասսան հիւանդուց ապիտութեան ժամանգ ցասման բօսկներում դնելի դիմելու աւանդական բնազդը։

Ես հետևակար ունենալով միայն և միայն վերոյիշեալ երկու համայքներին նախնական ցանկալի համերաշխութիւնն ու միութիւնը, ձեռքս խղճիս, բարոյական պարտք եմ համարում ի լոյս աշխարհ գնել այս խնդիրը, որ վրա հրաւիրելով ամբողջ Արդուինի հասարակութեան լուրջ ուշադրութիւնը, և իմ կողմից մասնանիշ անելով սկզբնապատճառների վրա, առաջարկում եմ իմ տեսակէտը այս անախորժ ու վնասաբեր երևոյթը վերացնելու նկատմամբ։

Թէև ցաւոք սրտի, բայց և բնաղատված եմ խնդրին ուղղակի ծօտենալու համար միանգամայն բացորոշ յայտնել, որ այժմ Արդուինում գոյութիւն ունեցող երկպառակութեան գլխաւոր պատճառը հանդիսանում է Դաշնակցութեան տեղական մարմինը, յանձին իր անձնուռնաս անդամների, մի իրականութիւն, որ փակը հէնց ինքնին ամենապերճախօսէն ապացուցանում է։

Տեղական մարմինը, առնասարակ Դ. շնակցութեան վարիչներին յատուկ հրամայողական սխտեմին հետևելով, միշտ ձգտել է անտարբեր հայ-կաթոլիկներին ուղղակի թէ անուղղակի բողոքներին, կրօնական խղճութեամբ արված կողմնապահութիւնների դէմ դատաստանական կամ սոյնօրինակ գործերում, և երբեմն էլ այս տեսակի բողոքները չը նայած նրանց արդարացի ընաւորութեան, ուղղված լինելով նրա ակնապիշ ազատ վերաբերմունքների դէմ, նա լռեցրել է սպառնալիքներ յոխորտալով։

Բայց աւելի ընտրող լինելու համար իրերի դրութեան վերաբերմամբ, ես մի թառուցիկ ակնարկ եմ ձգում Արդուինի հայութեան դաշնակցական անցեալի վրա։

Դաշնակցութիւնը ինչպէս ամենուրեք, նրամանապէս և հոս Արդուինում, իբրև ժողովրդական մի կուսակցութիւն, փայփայելով նրա ամենանուիրական և սրտաբուխ զգացումները, հանդիսանում էր հայկական կեանքին ոսն տուող մի գործ։ Նրա պարզած վեհ դրօշակի տակ համախմբվեց իր ժամանակին, ինչպէս հայ-լուսաւորչականութիւնը, նմանապէս և հայ-կաթոլիկութիւնը, որոնք ձեռք ձեռքի տուած, համերաշխութեան հոգով ոգեորված թօթափած հինաւուրց կրօնական նախապաշարմունքները, զգացած թէ մէկը և թէ միւսը Հայի ու Արամի հարազատ սերունդը լինելուց անխտիր յօժարակամ զոհարերում էին իրանց զժուարավաստակ կօպէկները և իրագործում նրա հրամանները։

Եւ ես իրաւանութեան համդէպ վշտակից սրտով պիտի ասեմ, որ շատերս հաւատում էինք գուցէ թէ Դաշնակցութիւնը պիտի հանդիսանար միանգամայն հայկական իրականութեան մէջ այն ցանկալի շաղկապը, որը պիտի միացնէր իրար, ժուտիկ ապագայում միաձուլելու պայմանով, թէ հայ-լուսաւորչականին, թէ հայ-կաթոլիկին, և թէ հայ բոզբականներին ինչպէս և ռուսահայերին ու տաճկահայերին...

Եզրափակելով իմ հայացքները, յայտնում եմ որ, այժմ հոս գոյութիւն ունեն երկու հակադիր հայ-ազգակներ,—հայ-կաթոլիկութիւնը համախմբված իր կրօնի դրօշակի տակ, կազմելով օպոզիցիա տեղային դաշնակցական վարիչների սպառնալիքների ու անտեղի սանձգութիւնների դէմ, և հայ լուսաւորչականութիւնը՝ ներկայացնելով Դաշնակցութիւնը։

Պէտք է, պէտք է շուտափոյթ միջոցներ ձեռք առնել, ը դեռ ապէտի ուրուականը չը տեսնված, վերանայ այս կործանիչ անտագոնիզմով սնված փոխադարձ հակառակութիւնը։

Այս նկատմամբ յայտնում եմ իմ տնակէտը. զրկել Արդուին երկու կամ չորս հոգի, երկու հասարակութիւններից հաւասար թիվով, որոնք լինեն միայն ոչ Արդուինցիներ և ոչ ալ Դաշնակցականներ, և ունենան լիազօրութիւն—հասկանալի է թէ ումից—քննելու երկպառակութեան շարժառիթները ու վերացնեն նրանց, միութեան կոչ անեն երկու հասարակութիւնները ալ։

Ես լիայոյս եմ, որ այս նկատմամբ ամենանպատակայարմար քայլը սա կը լինի։

Արդուինցի

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ Վ. ՍԻՐՏԻՆ

(Նամակ խմբագրութեան)

—

«Մշակ»-ի № 34-ի մէջ Վ. Սիրտը մի յօդուած է զետեղել, որտեղ երևի իայթված մանդամայն Allons-ի պատասխանից, ճիգ է թափում հերքել նրան և այդ գերբնական ճիգերի մէջ մի գիւտ է արել, որ արձակված Փիլոսեանին պաշտպանողը հէնց ինքը Փիլոսեանն է Allons ծածկանուն տակ։

Զը գիտեմ, թէ ինչ հիմք է ունեցել Վ. Սիրտը այդպէս ենթադրելու, միայն ես մի հարց կը տայի նրան.

—Ինչ անուն տալ ձեզ, քանանուն պարոնիկ (Վ. Խորէնի, Վ. Սիրտ, Վ. Խորէնեանց, Վ. Տէր-Գէորգեան—ապացոյցներ կուզէք, համեցէք հրապարակ՝, որ անցեալ տարի մինչև անզգայութեան էիք հասել բորբոքվելուց, որովհետև տեսուչը կասկածել էր մի աշակերտի վրա «Վայէ» ծածկանուն տակ գրելուն համար, իսկ այսօր առանց մազաչափ հիմքի և քաշվելու, այդպիսի մի գիւտ էք անում հերքապարակով և ձեր ամբողջ յօդուած բառակոյտը կազմում էք իմն հետ ունեցած ձեր անձնական հաշիւներով։

Ես իմ արժանապատուութիւնից ցած եմ համարում պատասխանել զանազան դեմագոգ Վ. Սիրտերի, և որովհետև Allons-ը գրել է «Մշակ»-ում և «Հումանը»-ում, ուստի ես թողնում եմ, որ այդ խմբագրութիւնները իրանք հերքեն ձեր այդ անհեթեթ գիւտը։

Այս իմ կողմից մեծ զոհողութիւն է. գոհ եղէք։

Վ. Փիլոսեան

Թիֆլիս

Խմբագրութեան կողմից. Allons և Փիլոսեան տարբեր անձնաւորութիւններ են։

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ

(Նամակ խմբագրութեան)

—

Բաքու փետրվարի 11-ին

Ամսիս 2-ին մի բարեկամի հարսանիքատանը մի հետաքրքիր երևոյթ տեղի ունեցաւ, որը կրում է հասարակական կերպարանք և որը արժանի է լրագրութեան նիւթ դարձնել, որպէսզի կարելի լինի պարզել այն մութ ամպերը, որոնք պատում են նորակազմ «Բաքուի Կուլտուրական Միութեան» գլխին, և որի մասին հասարակութիւնը հանդէսների ժամանակ՝ հարիւրաւոր մարդկանց ու կանանց ներկայութեամբ է խօսում։

Կանաչ սեղանների շուրջը բոլորած մարդիկ զբաղված էին քաղաքավարի կերպով «բուկի վերևս» անելով. թղթադրամները թումբ-թումբ մէկի առաջից միւսի առաջն էին թռչում։ Այդ ժամանակ մօտեցաւ դրանց մի երիտասարդ (Ն. Դ.-եանց) և խնդրեց խաղացողներին աջուձախ շպրտած փողերից մատն հանել Գանձակի նահանգի սովամահ եղեալներին, թոյրերին և նրանց մերկ ու քաղցած երախաներին։ Մի քանի հոգի տուին, բայց մեացեալները սև երես դառած աչքները «կարտ»-ի վրայից չէին բարձրացնում։ Ընթրիքի սեղան սարքվեց. հիւրերը նստեցին. գլուխները տաքացաւ. հանոցներով բերալ կուսակցութիւնը պէտք է նրանց նոր դաշնակցութեան, այսինքն «այս չիրիցս հանի, միւսը ձգի...»։

Ախր...

Այժմ մենք պահանջում ենք, որ այդ երիտասարդը հարցը պարզէր հայ մամուլի էջերում, որպէս զի հայ հասարակութիւնը իմանայ եղելութեան իսկութիւնը։

Իսկ եթէ այդ պարոնը կը լռէ, չի ցանկանայ «վատ-մարդ» լինել, Կուլտուրական Միութիւնը պարտաւոր է «Մշակ»-ի էջերում հարց բարձրացնել իր անունը արատաւորվելուց ազատելու։

Մեզ միայն ցանկալի է իմանալ, Ա. ով է այն մարդը, որ ասել է թէ իբրև մայր Դաշնակցութիւնն է ցորեն բաժանում։ Բ. որ գիւղումն է ասել Գ.-դ. Երբ և որ ժողովում Ատաիանը չէ յայտնել հեռաքրքրվողներին նպաստ բաժանողների անունը։

Մենք ցանկանում ենք «Մշակ»-ի էջերում պարզել այդ հարցը, որովհետև թէ մեր օրաթերթերից ամենաշատ տարածվածը «Մշակ»-ն է և թէ հայկական բոլոր խաների մէջ, առանց կուսակցութեան խտրութեան, ժուռ ունի և ընթերցողներ։

Իմ, իբրև թղթակցի, պարտականութիւնս եմ համարում սպասել վիճակ կողմերի բացատրութիւններին, այլապէս ստիպված կը լինեմ պարտականութիւնս կատարել, ու, ինչպէս էլ լինի, և ինչ գնով, տեղեկութիւն հաւաքել հրապարակ դնելու եղելութիւնը։

Թ. Մէջլումեան

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

—

Ընտրողական ըէֆերմը, որը 1885 թ. օրէնք դարձաւ, կուսակցութիւնների այդ զարգացման առաջին կարևոր հետևանքն էր։ Այդ ընտրողական ըէֆերմով լիբերալ կուսակցութիւնը իրաւունք տուեց գիւղական բանուորներին, որպէսզի այդպիսով հոդաստէրների ազդեցութիւնը ոչնչացնի գիւղական ընտրողների շրջանների վրայից։ Առանձին ընտրական ունեցողներին տրված ձայնի իրաւունքը, որ առաջ վերաբերում էր միմիայն քաղաքային ընտրողական շրջաններին, այժմ տարածվում էր և գիւղական շրջանների ու կոմունիների վրա։ Լիբերալ կուսակցութիւնը յոյս ունէր այդպիսով իր տիրապետութիւնը երկար ժամանակով ամրացնել։ Բայց այդ հաշիւը սխալ դուրս եկաւ։ Նա սխալ չէր լինի այն դէպքում միայն, եթէ այդ կուսակցութիւնը կարողանար իր նախկին կողմնակիցներին բուրժուազական շրջաններից իր կողմը պահել։ Բայց նա չէ կարող որևէ զիջում անել բանուոր դասակարգին, հէնց դասով իսկ չը հեռացնելով իրանից մի շարք բուրժուական տարրեր։ Այդ կուսակցութիւնից բուրժուազական կողմնակիցների հեռանալով նա նորից էլ աւելի կախում է ունենում բանուորներից, որպէսզի նրանց միջոցով ազդեցութիւնը մեծացնելու համար, լիբերալները կուզենան բանուորներին ստրադարկել։ «Մինչ այստեղ, և սրանից յետոյ ոչ մի քայլ այլևս չենք կարող զիջել», նրա տեղը կը ընի խսկոյն։

Եթէ լիբերալները այդպէս անելու համար քաջութիւն չեն ունենայ և կը շարունակեն իրանց նախկին զիջումների ճանապարհով ընթանալ, այդ պարագայում հաւանական է, որ նրանք կը խանդաղեն զուտ բանուորական կոլեկտիվ կուսակցութիւն կազմվելուն։ Բայց դա կարող էր լիբերալ կուսակցութիւնը աջողվել միայն այն դէպքում, երբ իր սեփական զարգացումը նրան կոլեկտիվիզմի հասցնէր։ Նրա միջից կանհետանային այն բոլոր տարրերը, որոնք շահագրգռված են կապիտալիստական կարգերով, և նրա կազմի բուրժուազական մասերից կուսակցութեան մէջ կը մնային միմիայն այն տարրերը, որոնք, պրոլետարական շարքերը անցնելով, կարել են իրանց կապերը կապիտալիստական հասարակութեան հետ։

Ի հարկէ, շատ քիչ հաւանականութիւն կայ, թէ Անգլիայի զարգացումը հէնց այս ուղիով կը գնայ, չը նայելով որ անգլիացիք շատ սերտ են կապված իրանց հին ձևերի հետ և սիրում են նոր գլխին հին տիկերի մէջ լցնել։

Այնուամենայնիւ թող լինի այն, ինչ որ լինելու է։ Այստեղ խօսքը միայն այն մասին է, որ անգլիական կուսակցութիւնների յարաբերութիւնների զարգացման օրինակով ապացուցվի, թէ որ ատիճան սխալ է այն կարծիքը, թէ պարլամենտարիզմը օգտակար է բացառապէս կապիտալիստների դասակարգին։

Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս ներկայացուցչական սիստեմը, նայելով ամենատարբեր զարգացման ատիճանին և ընտրողական իրաւունքի ընաւորութեանը, ծառայում էր միմեանցից ամենատարբեր դասակարգային շահերին և բազմատեսակ ձևեր էր ընդունում։

Անգլիական ներքին պատմը, մէկ ու կէս դար արիստոկրատիայի դիկտատուրայի համար գործիք ծառայելուց յետոյ, մի կէս դար էլ արդիւնաբերական կապիտալիստների դիկտատուրայի համար գործիք դարձաւ։ Բայց վերջինները արդէն կորցրել են իրանց բացարձակ իշխանութիւնը, պրոլետարիատը արդէն կարողանում է պարլամենտում և պարլամենտի միջոցով իր օգտին փոխել երկրի ներքին քաղաքականութիւնը, և մօտ է այն օրը, երբ անգլիական ամենակարող պարլամենտը նրա դիկտատուրայի գործիքը պիտի դառնայ։

XII

Պարլամենտարիզմը եւ բանուորական դասակարգերը

—

Եթէ մենք պիտում ենք, որ պարլամենտարիզմը երկու տեսակ է լինում, որ պարլամենտարիզմի ձևը մի տեսակ զէնք է ներկայացնում իրանից, որը կարող է ծառայել և ծառայել է միմեանցից բոլորովին տարբեր կուսակցութիւններին ու դասակարգերին, դը բանով ապացոյց, մենք բոլորովին չենք ուզում ասել, թէ ժողովրդի որոշ խաւերը պարլամենտարիզմից ազատութիւն են տեսել, իսկ միւսները ոչ։ Մենք արդէն տեսանք, որ պարլամենտի կատարած ֆունկցիաները շատ էլ հասարակ չեն։

Պատգամաւորի գործունէութիւնը պարլամենտում, ինչպէս և ասեն մի ուրիշ պաշտօն, արդի աշխատանքի բաժանման պայմանների մէջ, պահանջում է մասնաւոր դիտութիւն և պատրաստականութիւն ունենալ նա պահանջում է խօսելու շնորհք ունենալ, բայց աշխարհախոյեցք, որը կարողանայ ընդգրկել ընդհանուր ազգային և միջազգային նշանակութիւն ունեցող հարցերը։ Նա պահանջում է, վերջապէս, որոշ չափով իրաւաբանական, տնտեսական և պատմական ուսումն ունենալ, գոնէ պարլամենտի այն բոլոր անդամների համար, որոնք ցանկանում կամ պարտաւոր են մի քիչ աւելի բարձր կանգնած լինել, քան միմիայն քուէ տուող ոչխարների հօտը։

Այդ պատճառով էլ պարլամենտի անդամներ գլխաւորաբար ընտրվում են այն դասակարգերից, որոնք, հէնց իրանց մասնագիտաական պայմանների շնորհով, վերոյիշեալ յատկութիւններն ունեն. այդպէս են փաստաբանները, պրոֆեսորները, ժուրնալիստները, չինովնիկները և ուրիշներ։ Կամ թէ չէ, ընտրվում են այն դասակարգերից, որոնք բաւականաչափ ազատ ժամանակ ունեն, այնպէս որ նրա անդամները, ցանկացած դէպքում, կարող են ձեռք բերել պէտք եղած գիտութիւններն ու պատրաստականութիւնը. այդպիսիներն են խոշոր կապիտալիստները, կալուածատէրերը և այլն։

Այս տեսակէտից մի որոշ չափով հիմք կայ ասելու, որ պարլամենտարիզմը միմիայն բուրժուազիայի ներկայացուցչութիւն է նշանակում, բուրժուազիա խօսքը ընդունելով իր ամենալայնագոյն իմաստով։

Այդ հիմքը կար այն ժամանակ, երբ Բրիտանիան ազատվեց իր՝ անմիջական ժողովրդային ներկայացուցչութիւնից՝ գաղափարն էր արծարծում։ Հիմա այդ հիմքը չը կայ։ Այն և ներկայ ժամանակների միջև կայ բաւական դասակարգի հակայական զարգացման շրջանը։

Բաւական դասակարգը, ինչպէս և մանր բուրժուազիան ու սակաւաշող գիւղացիութիւնը սկզբներում բոլորովին զուրկ էին այն բոլոր պայմաններից, որ անհրաժեշտ են իրանց միջից պարլամենտական գործիչ պատրաստելու համար։ Բայց բանուորական շարժումի հետ այդ հանգամանքը փոխվեց։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՍՆ

—

Թիֆլիս, փետրվարի 11-ին

Փետրվարի 10-ին մօտաւորապէս ցերեկվայ ժամի 4-ին Կուսանաց վանքում կատարվից հետևեալ դէպքը։ Մի հայ տիկին լաւ զուգված զարդարված մտնում է Աբրամ-Արդակի հրապարակի մի շարք խանութներում և առաջարկում մանրացնել 25 բուբլանոցը, պատճառ բռնելով թէ կարգի 40 կօպէկ պէտք է վճարէ։ Թարսի նման ոչ մի տեղ մանր փող չէ ճարվում և տիկինը խանութներից ստանալով 40-ական կօպէկները վերադարձնելու յուսով, դուրս է գալիս և իր փոքրիկ աղջկայ հետ միասին, շարունակում է ճանապարհն դէպի կաթոլիկական փողոցը։ Մտնում է մի երանցի հայ մանրավաճառի խանութը (Մ. Յարութիւնեանի) և նոյն նպատակով կորզում է էլի 40 կօպէկ։ Այնտեղից նա շարունակում է ճանապարհը դէպի Մողնու փողոցը, որտեղից պիտի գնար Բեբութեան փողոցից դէպի Կուսանաց վանքը ուխտ անելու նպատակով։ Դէպի Կուսանաց վանք տանող ճանապարհին մտնում է Բեթղեհեմսկի տուպիկի տեղիւնի Սարգսանցի խանութը և 25 մնոցը մանրելու առաջարկութեամբ ստանում է էլի 40 կօպէկ։

Դրանից յետոյ տիկինը համարձակ սկսում է բարձրանալ սանդուղքներով վանքը գնալու համար։ Ցանկարծ մի քանի տասնեակ խումբ երիտասարդներ զանազան փողոցից դուրս գալով գոռում են, թէ մեր 40 կօպէկները տարաւ, միւսը 45 կօպէկը, բռնեցէք, առնենք մեր փողերը, մենք խաբվել ենք, և այլն։ Բարձրացած աղմուկից Մողնու Բեթղեհեմի թաղերը իրար ընկան կարծելով, թէ մարդասպանութիւն կամ յարձակումն է պատահել։

Տիկինը դեռ եկեղեցի չը մտած Մ. Յարութիւնեան իր 40 կօպէկը յետ էր ստացել, իսկ միւսներն էլ գնում էին ստանալու։ Նա այդ միջոցին եկեղեցում մայրապետից 25 բուբլանոցի մանր էր պահանջում, երբ ամբողջը լցվից եկեղեցին և պահանջեց փողերը վերադարձնել։ Ամօթից տիկինը գնում է դուրս, եկեղեցու բակը և տալիս մէկին 45 կօպ. մի ուրիշի 40 կօպ. և Սարգսեանի 40 կօպէկը։ Ամբոխը զրգռված գնում է ինքնադատաստանի և նրանցից մէկը «մուրթ է քսում տիկնոջ երեսին և անշուշտ աւելի ոգեր միջոցների կը դիմէր, եթէ մի քանի խելացի գլուխ օրիորդներ և պարոններ չը միջամտէ։ Ս. Արդէն ժամասացութիւնը վերջացել էր և տիկինը նորից մտաւ եկեղեցի։ Ցանկարծ կանանց գասից մի տիկին պահանջում է տիկնոջից իր 1 բուբ. 50 կօպէկը, որ հագուստ կարելու պատրաստով կորցրել էր նրանից։ Եւ տիկինը, սկզբում թէև ուրանում էր, բայց յետոյ հանեց ու վճարից 1 բ. 50 կօպէկը։ Տիկինը եկեղեցում սպասեց մինչև որ 4 ժամից յետոյ ամբոխը ցրվեց, որից յետոյ ինքն էլ հեռացաւ։

Տիկինը բաւականին լաւ կատրում է հայերէն, վրացերէն լեզուներով։ Ուշեհարութեան արժանի է նրա փոքրիկ աղջիկը։ Ինչպէսք է սոսկալ նա իր մօրից։ Տարօրինակը այն է, թէ ինչն էր զրգռում տիկնոջ այդպիսի քայլերը անելու։ Վերադրել կարիքի չէ կարելի, որովհետև ակնառու օրիորդները պատմեցին, որ տեսել են տիկնոջ մօտ 5, 10, 25, 50 բուբլիանոցներ և նոր-իսկ երկիւղ էին կրում, որ մի գուցէ թաղանթ տիկնոջը։ Պարզ է, որ տիկինը խաղաղ էկսպլոատիրներով է պարապվում։ Հասարակութիւնը թող զգուշանայ այդպիսիներից։ Տիկինը մօտ 35 տարեկան է, միջահասակ, ու մարդերով կապոյտ հագուստով և դէմքը չաղ, թուխ։ Ման է գալիս շլիապայով և առանց փերարկուի։ Իր հետ մի տեղ աղջիկը կը լինի 6 տարեկան, թուխ աչքերով, չէկ մազերով, գլուխը թաշկինակով կապած, երկար վերարկու հագած։

Անանուն

—

Թիֆլիս, փետրվարի 7-ին

Մի խումբ Թիֆլիսաբնակ զաղախեցիներ, Զաղախի գաւառում գիւղատնտեսական գրպրոց բանալու ապիթով, պ. Ս. Յարութիւնեանին ներկայացրել են մի գրութիւն, որով արտայայտել են իրանց շնորհակալութիւնը հետևեալ ձևով։

«Կարդալով սոյն թերթ «Մշակ» լրագրի № 26-ում գրած «Մի ուրախալի երևոյթ» վերնագրի տակ այն լուրը, որ ձեր խորհրդակցութեամբ հանդուցեալ Դաւթեանի պատուելի ժառանգները որոշել են մեր գրախանութման հայրենիքում բանալ գիւղատնտեսական դպրոց, մենք, թիֆլիսաբնակ զաղախեցիներս, անբաւ ուրախութիւնից դրդված, որոշեցինք արտայայտել մեր անկեղծ շնորհակալութիւնը ձեր միջոցով հանդուցեալ Դաւթեանի բարեսիրտ ժառանգներին, որոնց արած բարի գործը մեր խեղճ հայրենիքին կը տիրվի դարէդար, որը կը լինի բարի օրհնան մեր միւս հարուստ ազգայիների համար ևս, պատիւ և յարգանք յարգելի բարեգործներին (հետևում են 22 ստորագրութիւն)։

Ի դիմաց Թիֆլիսաբնակ զաղախեցիների՝

Ս. Պապիան

—

Թիւրիմացութիւնների սնունդ չը տալու համար կարևոր եմ համարում յայտնել հետևեալը։ Այս տարվայ «Մշակ»-ի № 15-ի մէջ տպված իմ «Անչափահասների ոճրագործութիւնը և փրկութեան դպրոցներ» յօդուածում մոռացված է յիշված ազգիրի տպագրութիւնը։ Ինչպէս յայտնել էի, այդ յօդուածի սատիսթիկական տեղեկութիւնները վերցված են «Prof. Rein ի Pedagogik»—գրքից։ Այդ յօդուածի մէջ մտել է նոյնպէս հետևեալ տպագրական սխալը. փոխանակ տպագրելու 14,636 աշակերտներ և 443 ուսուցիչ, տպագրված է ընդհանառակը։

Գ. Էգիլեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի քաղաքագլուխը դիմել է գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան և առաջարկել է ներկայացուցիչներ ընտրել գործակատարներից այն խառն մասնաժողովի համար, որը կազմելու է պարտադիր կանոններ՝ առևտրական հաստատութիւնների, պահեստների, գրասենեակների ծառայողների նորմալ հանգիստը ապահովելու համար։ Յիշեալ մասնաժողովը բաղկանում է քաղաքային ինքնավարութեան, առևտրականների և նրանց ծառայողների ներկայացուցիչներից։ Քաղաքային դուման իր կողմից արդէն ընտրել է 6 ձայնաւորներ յիշեալ մասնաժողովի համար, այդքան անդամ ընտրելու են վաճառականական ընկերութիւնը և առևտրական հաստատութիւնների ծառայողները։

—

Համաձայն Կովկասի Փոխարքայի արած միջնորդութեան, որ պաշտպանութիւն գտաւ Ֆինանսների մինիստրի կողմից, Բարձրագոյն հրամայված է 1906 թ. յատկացրած դիւանատան փոխառութեան ելեմտի մնացորդից 3600 բուբլի առանց տոկոսների իբրև փոխառութիւն տալու, 5 տարվայ ընթացքում վերադարձնելու պայմանով՝ անասուններ գնելու համար—Գանձակի նահանգի Արէշի գաւառի Մարզուզի գիւղի բնակիչներին, որոնք ջնջվել են հայ-թուրքական ընդհարումներից։

«Тифлисск. Листокъ»-ին Գանձակից գրում են. «Ինչպէս արդէն յայտնի է, պահեստի պրոպորչիկ Լօլաձէի սպանութեան առիթով ձերբակալվեցին երդ.-հաւատարմատար Ն. Բաբաջէվեանը, հոգատեր Լան բէկ Մելիք-Մուսայանեանը, Ասլանբէկ Մելիք Շահնազարեանը և Մէքայել Աֆանասեանը։ Գործը քննվից կալեր գործեր վարող դատախազի օգնականի հսկողութեան տակ։ Որևէ փաստաթղթեր և մեղադրական ապացոյցներ չը լինելու պատճառով, այդ գործը դադարեցրվեց և այդ բոլոր անձինք ազատից արձակվեցին։ Այժմ, Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազի առաջարկութեամբ յիշեալ անձանց կրկին ձերբակալեցին և բանտ գրին։ Նոյն տեղից հաղորդում են, որ տեղական ոստիկանապետ Զօկլաչովը թողում է իր պաշտօնը։ Առնասարակ ոստիկանութեան պաշտօնեաների մեծ փոփոխութիւն է նախատեսվում։

—

Նախալովկայի բնակիչները դիմել են Թիֆլիսի քաղաքագլխին և գանգատվել են, որ Ղրկիրները և հայերը խեղդ հայ և Ղ-ի ... ները շատ բարձ արդ... Զ... մ... ճանապարհի համար (20 դ... չու... տան ...) վերցնում են 20—22 կօպէկ, իսկ հայ վաճառները, բացի բարձրացած գներից, վաճառում են համարեա կիսախմար, որպէսզի քա... 2ը ծանր դայ։

—

Թիֆլիսի նահանգապետը հաստատել է Թիֆլիսի քաղաքային դումայի հետևեալ որոշումները. 1) Ժամանակաւորապէս աւելացնել երկրորդ տեսակ հացի գինը 1/2 կօպէկով, մնացած տեսակները թողնել առանց փոփոխութեան և պարատուրիցներ հացթուխներին անպայման վճառքի համար օգնեալ երրորդ տեսակի հացի հարկաւոր քանակութիւն. 2) Ցանձնարարել քաղաքային վարչութեան հացի սակագինը որոշող մասնաժողովի հետ միասին և պ. Պիրալովի մասնակցութեամբ, ստուգել ալիւրի գները, փորձել բոլոր տեսակի ալիւրների յատկութիւնը և տացած հետևանքների մասին զեկուցել դումային։

—

Փետրվարի 15-ին վրաց հոգևոր սեմինարիայի աշակերտները իրանց վարչութեան ներկայացրել են մի շարք պահանջներ։ Սեմինարիայի ընկերը և Պետրոս եպիսկոպոսը փետրվարի 16-ին այդ առիթով խօսակցեցին աշակերտների հետ։

—

Թիֆլիսում ապրող շիա մահմեդականները, օգտվելով մուհարամի օրերից, սիւնիների մէջ հանդէսի համար ժողովել են 1000 բուբլուց աւելի։

—

Գեներալ-նահանգապետը թոյլատրել է հայոց Դրամատիկական Ընկերութեան նախապատրաստվելու փետրվարի 23-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում, երեկոյթ սարքել պարերով՝ յիշեալ ընկերութեան միջոցները բազմապատկելու համար։

—

Թիֆլիսի բոլոր ազգերների 1907 թվի ընթացքում տացվող եկամուտների ելմուտը վարչութիւնը հաշուել է 1,357 596 բ. բրլի. որ անցեալ տարվայ ելմտից 200 000 բուբլիով պակաս է։ Ծախքերը ծածկելու քաղաքը ոչ մի արիւր չունի և քաղաքային ինքնավարութեան ծախքերը ծածկելու համար հարկ կը լինի կամ փոխառութիւն ընել կամ գնահատ...

Տեղական մարմինը, առնասարակ Դ. շնակցութեան վարիչներին յատուկ հրամայողական սխտեմին հետևելով, միշտ ձգտել է անտարբեր հայ-կաթոլիկներին ուղղակի թէ անուղղակի բողոքներին, կրօնական խղճութեամբ արված կողմնապահութիւնների դէմ դատաստանական կամ սոյնօրինակ գործերում, և երբեմն էլ այս տեսակի բողոքները չը նայած նրանց արդարացի ընաւորութեան, ուղղված լինելով նրա ակնապիշ ազատ վերաբերմունքների դէմ, նա լռեցրել է սպառնալիքներ յոխորտալով։

Բայց աւելի ընտրող լինելու համար իրերի դրութեան վերաբերմամբ, ես մի թառուցիկ ակնարկ եմ ձգում Արդուինի հայութեան դաշնակցական անցեալի վրա։

Դաշնակցութիւնը ինչպէս ամենուրեք, նրամանապէս և հոս Արդուինում, իբր

տական տուրքը (оцѣночный сборъ) ¾%-ից հասցնել 1%-ի։

—

Փետրվարի 13-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում ինչ որ բանի պատճառով վէճ է ծագում 1-ին արական գիմնազիայի 6-րդ դասատան աշակերտ Աւագեանի և նոյն գիմնազիայի աշակերտ Նիկոգարեսովի և վրաց ազնուականների գիմնազիայի սան Էլիզովի միջև։ Աւագեանին յայտնում են, որ վերջինները կամենում են նրան ծեծել։ Փետրվարի 14-ին, հայկական տօնի օրը, Աւագեանը գնում է գիմնազիա, մտնում է դասարան և, գրպանից հանելով Մաուզէր ատրճանակը, յայտնում է, որ եթէ որևէ մէկը վիրաւորէ նրան, այն ժամանակ նա նրան կը գնդակահարէ հէնց այդ ատրճանակով։ Նրանցից մէկը Տուխարէլին, նոյնպէս հանում է ատրճանակ և հրամայում է աշակերտներին ցրվել, սպառնալով հակառակ դէպքում արձակել։ Անմիջապէս երկուսի ձեռքից էլ ատրճանակները խլում են և տանում են կօմենդանտի վարչութիւնը։ Նոյն օրը, երեկոյեան, կայանում է գիմնազիայի մանկավարժական խորհրդի նիստը, ուր որոշվում է արձակել Աւագեանին և Տուխարէլիին։

—

Նօրմալ հանդստի նոր կանոնների համաձայն, քաղաքային սպանդանոցում անասուններ չեն մորթվիլ կիրակի օրերը, Զատկի և Ծննդեան 1-ին և 2-րդ օրերը։

—

Գօրու գաւառապետ նշանակված է Թիֆլիսի գաւառապետի ստորին օգնական Ե. Դ. Գուգուշվիլին։

—

Փետրվարի 15-ին, գիշերվայ ժամը 12-ին 2-րդ Տումանովսկի փողոցում, (IX-րդ քաղաքամաս), № 7 տան մօտ, լսվում են պարբերաբար 10 ատրճանակի և հրացանի կրակոցներ։ Երբ հանգստութիւն է տիրում, փողոցից լսվում է վիրաւորվածի հեծկլտանք, որին տանում են Մելքայէլեան հիւանդանոցը։ Ինչպէս վերջը պարզվում է, երբ գիշերով ոստիկանները փոփոխվում են, անյայտ անձինք նրանց վրա յարձակում են գործում։ Սկսվում է հրացանաձգութիւն, որի ժամանակ վիրաւորվում է յարձակվողներից մէկը։

—

Երկաղործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօրը գիւղատնտես պ. Տիմօֆիեվին ուղարկել է Թիֆլիսի և Սղնախի գաւառների զանազան տեղերը՝ երեսեցած դաշտամշների դէմ մէջոցներ կազմակերպելու համար։

—

Վերջերս ձերբակալված Գօրու գաւառի Կվէմօ-Պլավի գիւղի բնակիչ Վասօ Իլիչ Գաղաշվիլին, որ մեղադրվում է բազմաթիւ սպանութիւնների մէջ, Թիֆլիսի գեներալ-նահանգապետի հրամանով յանձնված է պատերազմա-դաշտային դատարանին։

—

Քաղաքային դումայից ընտրված մասնաժողովը փետրվարի 15-ին քննելով 1907 թ-ին քաղաքի ունեցած եկամուտները, եզրակացրել է, որ այդ տարվայ ընթացքում գործավարութեան մէջ ոչ մի վնասում չէ կատարվել։

—

Փետրվարի 14-ին անհետ կորել է «Մին» վրաց լրագրի գրաշար Դօմէնդի Պաչիձէն։ Մինչև օրս փնտռում են, սակայն ոչ մի հետևանքի չեն հասել։

—

Վաղվանից լոյս կը տեսնէ նոր խմբագրութեամբ «Զվէնի-Ցխովրէբա» լրագիրը։ Խմբագիրն է Մ. Գ. Կվաշձէ։

—

Փետրվարի 15-ին, դեռ վաճառքի չը հանած գրաւել են վրաց երգիծաբանական «Խումարա» շաբաթաթերթը, ՀԱասակը ուղղութեան պատճառով։

—

Վերջին ժամանակներս 2-րդ արական գիմնազիայի 8-րդ դասատան աշակերտները քանիցս դիմում են արել նոյն գիմնազիայի ուսուցչին՝ և խնդրել են առաջիկայ քննութիւնների ժամանակ կրճատել պատմութեան դասընթացքը։ Մանկավարժական խորհուրդը քննելով այդ հարցը, հակառակ ծնողական ժողովի ներկայացուցչի ցանկութեան, որոշում է փակել գիմնազիայի 8-րդ դասարանը, մինչև գործի բացարձակ պարզվելը։ Փետրվարի 16-ին աշակերտները ժողով են գումարում. գիմնազիայի վարչութիւնը վերատեսչի հետ միասին գալով ժողով, պահանջում է, որ աշակերտները ցրվին։ Վերջինները իրանց հերթին առաջարկում են վերատեսչին անյապաղ թողնել ժողովը և հեռանալ, միաժամանակ թոյլ տալով իրանց նրանց հասցէին տգեղ դարձուածքներ ուղղել, ինչպէս օրինակ սև հարուրեակ, լրտես, և այլն։ Եկած կօզակները շրջապատում են գիմնազիայի շէնութիւնը, իսկ աշակերտները տեսնելով կօզակներին, ցրվում են։

—

Փետրվարի 15-ին, երեկոյեան գնացքով Պետերբուրգ մեկնեց Կովկասի Փոխարքայի դիւանատան վերատեսուչ Պետերսօնը։ Բացակայութեան ժամանակ դիւանատունը կառավարում է Ն. Ն. Մակսիմովը։ Պետերսօնը Պետերբուրգում կը մնայ մօտ 2 ամիս, ինչպէս Փոխարքան։

—

Փետրվարի 15-ին քաղաքային վարչութեան շէնութեան մէջ կայացաւ ժողովրդական առողջապահութեան խնդրով զբաղվող մասնաժողովի նիստը։ Մասնաժողովի նախագահ Մ. Զ. Աւանգիլովը յայտնեց, որ այդ ժողովը դումարվել է մասնաժողովի անդամներից մի քանիսի ցանկութեամբ՝ քննելու համար այն հարցը, թէ ինչ վերաբերմունք ունենալ դէպի սանիտարական բժշկական մասին վերաբերվող նոր որոշման հետ (նոր կանոնադրութեան նախագիծ և նրա կազմակերպութիւնը), որը յանձնված է սանիտարական բժշկական խորհրդի եզրակացութեան տես 1905 թ. մարտ ամսին, և մինչև օրս չէ վերադարձած ժողովրդական առողջապահութեան հարցով զբաղվող մասնաժողովին, չը նայած բժշկական-սանիտարական տեսչի խոստմանը՝ ներկայացնել խորհրդի եզրակացութիւնը մէկ ամսվայ ընթացքում։ Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ խոստման օրից արդէն անցել է 2 տարի, մասնաժողովը որոշեց խնդրել Թիֆլիսի քաղաքագլխին, որպէս զի նա առաջարկէ սանիտարական բժշկական խորհրդին մէկ շաբաթվայ ընթացքում ներկայացնել իր եզրակացութիւնը բժշկական-սանիտարական մասի նոր որոշման մասին, հանդերձ նրա կազմակերպութեան, յարակցելով ընդամենը, որ հակառակ դէպքում ժողովրդական առողջապահութեան խնդրով զբաղվող մասնաժողովը ինքնուրոյն կերպով կը քննէ յիշեալ կազմակերպութեան հարցը և իր եզրակացութիւնը անձամբ կը ներկայացնէ քաղաքային դումային։ Ապա բժիշկ Վարդանովի առաջարկութեամբ մասնաժողովը զբաղվեց արդէն գիշերային ապաստարաններում երևեցած վարակիչ տիֆի դէմ նախազգուշացման միջոցներ ձեռք առնելու հարցով։ Մասնաժողովը որոշեց դիմել այդ հարցով Թիֆլիսի քաղաքագլխին, առաջարկել իր կողմից փակել գիշերային ապաստարանը և բանալ ժամանակաւոր հիւանդանոց, յատուկ վարակիչ տիֆ ունեցող հիւանդների համար։

—

«Кавказъ»-ին հեռագրում են, որ փետրվարի 9-ին Օլօնէցկի նահանգի Կարգօպոլ քաղաքում, գիւղացիները սպանել են քաղաքական աքսորական Կվաշձէին։

—

Լուրերին նայած՝ կաթնատների ծառայողների արհեստական միութեան բիւրօն առաջարկել է շաբաթուել կիրակի օրերը և ժամը 7-ից յետոյ։

—

Քաղաքային թաղական բժիշկ տիկին Շէբերինան հիւանդացել է տիֆով։

—

«Кавказъ»-ին հեռագրում են. «Իրկուտսկի զինուորա-նահանգական դատարանի նախագահ գեներալ-մայոր Վօլկով նշանակված է Կովկասեան զինուորա-նահանգական դատարանի նախագահ»։

—

Փետրվարի 14-ին հայ դրամատիքական խմբի դերասանուհի տ. Վասիլ Մելիքեան յայտնել է ոստիկանութեան, որ նրա բնակարանի (Տելեգրաֆնի միջանցք) պատշգամբից անյայտ գողեր գողացել են թատրօնական զգեստներ և իրեր 100 ռուբլու արժողութեամբ։

—

Ձերբակալված Ի. Պուրցելաձէն աքսորվում է Վօլոգդայի նահանգը զինուորական դրութեան ամբողջ ժամանակամիջոցում։

—

Մարտի 6-ին, Թիֆլիսի դասատանական պալատում նշանակված է «Զէրնօմ. Նօվոստի» թերթի խմբագիր Ս. Մղիվանիի գործի քննութիւնը։ Մղիվանին մեղադրվում է քրէական պատժագրքի 129-րդ յօդուածով։

—

Սղնախի գաւառի Մաղանի գիւղի բնակիչները, կալուածատիրական անտառները բարբարոսաբար կորստելու համար, Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետից տուգանքի են ենթարկվել—3-ական ռուբլի իւրաքանչիւր ծխից։

—

Փետրվարի 12-ին ոստիկանութեան պաշտօնեաները կալանաւորում են Երևանի նահանգի բնակիչ 16-ամեայ Աւագ Երամօվին, որի գրպանում գտնվում է լցրած ատրճանակ և բոցի դրանից, նրա բնակարանը խուզարկելու ժամանակ գտնվում են դարձեալ երկու լցրած ատրճանակներ։

—

Փետրվարի 12 ին, Գօրիում, մահափորձ է կատարվում Գօրու քաղաքային աւագ Վլադ. Սաբոյի կեանքի դէմ։ Սաբոն վիրաւորված է աջ թեից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շ Վ Ե Ց Ի Ա

Մօտ օրերս հեռագիրը լուր բերեց, որ շվէդական կառավարութիւնը տեղեկութիւն ստանալով, որ ռուսաց կառավարութիւնը չէ համաձայնել իր առաջադրած պայմաններին, հրաժարել է ազատել Զերնեավկինին այն պայմանով միայն, որ վերջինս 24 ժամվայ ընթացքում կը հեռանայ Շվեցիայի սահմաններից։ «Aurore» լրագիրը այժմ հաղորդում է այն պայմանները, որոնք առաջարկված էին ռուսաց կառավարութեան։

1) Ռուսաց կառավարութիւնը պէտք է ներկայացնէր շվէդականին Զերնեավկինի մեղաւորութեան օրինական ապացոյցները։

2) Շվէդական կառավարութիւնը համաձայն էր տալ Զերնեավկինին այն դէպքում, եթէ նրան կը դատեն ոչ թէ զինուորական, այլ քաղաքացիական դատարանով։

3) Որ նրանք կը դատեն միայն այն յանցանքի համար, որի մէջ այժմ նա մեղադրվում է։

4) Որ Զերնեավկինին արգար ճանաչելուց կամ որոշված վճիռը լրացնելուց յետոյ մի ամիս ժամանակ կը տրվի արտասահման գնալու համար։

Այդ պայմանները մերժել են, իսկ ներկայացրած ապացոյցները Զերնեավկինի մեղաւորութեան մասին անհամոզիչ են ճանաչվել նաև եւրօպական, մանաւանդ ֆրանսիական հասարակական կարծիքի ազդեցութեան ներքոյ, շվէդական կառավարութիւնը հրաժարվել է Զերնեավկինին յանձնելու մտադրութիւնից։

Բ Օ Լ Գ Ա Ր Ի Ա

Բոլգարիայում ներկայումս երկաթուղային գործադուլ է, միևնոյն ժամանակ հակադինասիական ցոյցեր էլ են տեղի ունենում։ Կառավարութիւնը զրանց առաջն առնելու համար ներկայումս խիստ միջոցներ է ձեռք առել։ Բիպրեսսիաների դէմ բողոքում են միահամուռ կերպով բոլգարիայի բոլոր օպոզիցիոն կուսակցութիւնները։ Նացիոնալիստները, սոցիալիստները և պահպանողականները, չը նայելով հայեցողների անգամ տարբերութեան, Դանէվի զեկավարութեամբ վճռել են միանալ և մի ընդհանուր օպոզիցիոն բլոկ կազմել Սամբուլովան կաբինետի դէմ կռիվ մղելու համար։ Որքան էլ որ երիտասարդ է և անփորձ բոլգարական սոցիալիստների կուսակցութիւնը, որքան էլ անհաստատ են և անյուսալի բոլգարական նացիոնալիստներն ու ռուսասէրները, այնուամենայնիւ չէ կարելի ուշադրութեան չառնել դրանց ակտիվ գործելը Պեակովի «լիբերալ» կաբինետի դէմ, որի վարմունքը չափազանց հեռու է իսկական լիբերալիզմից։ Մի կողմից նա երկաթուղային գործադուլին մասնակցող բոլոր պահեստի զինուորներին բանակն է ուղարկում, իսկ միւս կողմից՝ փակում է համալսարանը իր բուսական ազդեցութեան ներքոյ, հակառակ ամբողջ հասարակութեան մինիստրը և ժողովրդական լուսաւորութեան մինիստրը Շիշմանովի կարծիքին, որը ստիպված էր հրաժարական տալ։ Այդ բոլորը նպաստաւոր հող է պատրաստում նորագոյ օպպոզիցիոն բլոկի համար և բոյգարական ժողովրդի համակրութիւնը գրաւելու համար շանսերը աւելացնում է բլոկի վերաբերմամբ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի։ Այսօր, երեկոյեան, բանւորական հարցով զբաղվող մասնաժողովի երկրորդ նստաշրջանի առաջին նիստում արդիւնաբերութեան ներկայացուցիչները դիմեցին նախագահ մինիստրին և միջնորդեցին յետաձգել ժողովը մինչև որ արդիւնաբերութեան ներկայացուցիչները ծանօթանան մինիստրութեան արդէն ստացած երկու նախագծերի մանրամասնութիւնների հետ։ Միջնորդութիւնը յարգվեց։ Ժողովը յետաձգվեց մի քանի օրով։

Մօսկվայի նահանգի գիւղատնտեսութեան տեսուչ Կրիվօվը նշանակված է հողային բարեկարգութեան և երկրագործութեան գլխաւոր վարչութեան վերատեսուչ։

ՄՕՍԿՎԱ, 14 փետրվարի։ Բոլոր միջնադարդ դպրոցներին հրահանգ է ուղարկվել, որով առաջարկվում է խստագոյն հետևել, որ սաների մէջ ծնունդ չառնեն ընտրողական կազմակերպութիւններ, աւագների խորհրդի նման։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ վրա, 15 փետրվարի։ Գեներալ-նահանգապետը առաջարկեց ելեքտրաքարշի վերատեսչին արձակել բոլոր ծառայողներին, եթէ մէկ օրվայ ընթացքում նրանք աշխատանքները չը վերսկսեն, նախազգուշացնելով, որ գործարանները կաքսորվեն քաղաքապետութեան սահմաններից։

ԼՕՆԴՕՆ, 15 փետրվարի։ Բանէրմանը պալատում յայտնեց, որ Իրլանդիայի վերաբերվող օրենագիծը կը ներկայացնէ Զատկից ոչ շուտ։

ԻԼԱՆՕ-ՎՕԶՆԵՍԷՆՍԿ, 15 փետրվարի։ Աշխատանքները բոլոր գործարաններում վերսկսվեցին։

16 փետրվարի

ԻՐԿՈՒՏՍԿ, 15 փետրվարի։ Բանտարկեալներին տանող գնացքի շարժվելուց առաջ, Սարօկինօ կայարանում, բանտարկեալ Զիմաէով դանակը ձեռքին յարձակվից պահակ զինուորների վրա, թեթև վիրաւորեց 4-ին և մէկ բանտարկեալի։ Զինուորներից մէկը երկու գնդակով սեղմեցրեց սպանց Զիակովին։

ՐՕՍՏՕՎ-ԴՕՆԻ վրա, 15 փետրվարի։ Գեներալ-նահանգապետի ձեռք առած միջոցների շնորհիւ ելեքտրաքարշի ծառայողների գործադուլը վերջացաւ։ Պահանջներին բաւարարութիւն չը տրվեց։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 15 փետրվարի։ Կրիվոյ Ռօգ կայարանում մի քանի կողոպտիչներ յարձակվեցին երկաթուղային զրաժատարի վրա։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվեց կայարանի կառավարիչը, ժանդարմական ոստիկան-օֆիցերը և կողոպտիչներից մէկը։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 15 փետրվարի։ Ներկայումս պալատում քննվող բարձր կրթութեան բարեկարգման օրենագիծը խիստ ընդդիմադրութեան հանդիպեց համալսարանի պրոֆեսսորների կողմից, որոնք վճռել են դասախօսութիւնները դադարեցնել։ Ուսանողների մի մասը յարվեց գործադուլի։

ՀԵՆԻԳՍԲԷՐԳ, 15 փետրվարի։ Ոստիկանական պաշտօնեայի վիրաւորելու և կարգ ու կանոնը խախտելու համար ռուս ուսանող Լիբիչը ենթարկվեց 500 մարկ տուգանքի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ Կշռի և չափի գլխաւոր պալատի կառավարիչ հանգուցեալ Մենդէլէեվի փոխարէն նշանակված է նրա օգնական պրոֆէսսոր Եգօրովը։

Պատերազմական գլխաւոր դատարանը հաստատեց Եկատերինօսլաւի պատերազմա-դաշտային դատարանի դատավճիռը՝ մահվան պատիժ տալու 8 հոգու—1905 թ. դեկտեմբերին Ալէքսանդրովսկ կայարանում զինված ապատամբութեանը մասնակցելու համար։

Զինուորական գլխաւոր դատարանը փոխեց Բաքուի պատերազմա-դաշտային դատարանի վճիռը Լիբլինսկի գնդի կօզակ Տօլստոյի վերաբերմամբ, որը դատապարտվել էր 7-ամեայ աքսորի յանցաւոր ընկերութեան պատկանելու համար և որոշեց գործը վերստին քննելու։

Գեներալ-շտաբի կարգադրութեամբ գեներալ կուրօպատկինի հաշվի առաջին երեք մասերը ուղարկվում են զօրաբանակի գլխաւոր պաշտօնեաներին։

ՏՕԿԻՕ, 15 փետրվարի։ Եապօնական կայսրութեան հիմնվելու օրվայ տարեդարձին, փետրվարի 11-ին ներկայացած դիպլոմատիական մարմին միկադօն ասաց. «Մենք առողջութիւն ենք ցանկանում տեղումս ներկայացուցիչներ ունեցող բարեկամ ազգերի նախագահներին և թագաւորներին։ Ընդամէն ցանկանում ենք, որ մեր յարաբերութիւնները նրանց հետ օրէցօր սրտագին դառնան»։

ԽԷՐՍՕՆ, 15 փետրվարի։ Կրեմլյրոգ կայարանում երկ տեղի ունեցած հրացանաձգութեան ժամանակ բացի յիշատակածներից, ծանր վիրաւորվել է մէկ ճանապարհորդ, ոստիկան և երկրորդ չարագործը։ Թեթև վիրաւորվել են գլխաւոր ժանդարմը, 3 գիւղացի և մէկ ճանապարհորդ։

ԿՐԱՍՆՕԳՈՒՐՍԿ, 15 փետրվարի։ Կօմենդանտ Կոզլովսկու սպանութեան մանրամասնութիւնները։ Հանգուցեալը ժամը 2-ին զբօսնում էր փողոցներով իր ծանօթների հետ, ցոյց էր տալիս այն նամակները, որոնցով սպառնալիքներ էր կարդացվում, թէ երեկոյեան ժամը 5-ին նրան կը սպանեն. զրպանից հանեց ժամացոյցը և ծիծաղելով նկատեց. «սպանիանները խափեցին, ահա ժամը արդէն 5-ն է, իսկ ես կենդանի եմ»։ Ժամը 6-ի մօտերը, երբ կօմենդանտը գնում էր միայնակ, նրան կանգնեցրեց մի անյայտ անձնաւորութիւն և աղաղակեց, «կանգնէ՞ր»։ Լսվեցին երեք կրակոցներ, կօմենդանտը ընկաւ սպանված։ Զբօսնող հասարակութիւնը վախեցած՝ սկսեց ցրվել։ Մարդասպանները թաղնվեցին հարևան բակում և փախան հետևի փողոցով։

ՊԱՐԻԶ, 15 փետրվարի։ Մինիստրների խորհուրդը սկզբունքով ընդունեց այն ընդհանուր նախագիծը, որը կանոնաւորում է պաշտօնեաների դրութիւնը։ Նախագիծը իրաւունք է տալիս մտնել դաշնակցութիւնների մէջ իրանց շահերը պաշտպանելու համար, սակայն թոյլ չէ տալիս մասնակցել գործադուլներին։

ԼՕՆԴՕՆ, 15 փետրվարի։ Համայնքների պալատում, պատասխանելով Վարշավայում բրիտանական Տիզլին մահվան պատիժ տալու առիթով արած հարցադրման, ստատսեկրէտար Գրէյը ասաց. «Բրիտանական դեսպան-հիւպատոսը յունվարի 26-ին ինձ հաղորդեց, որ ելեքտրաքարշի կօնդուկտորին կողոպտիչներից մէկը բրիտանական հպատակ Տիզլին է եղել։ Ես տեղեկութիւն չը ստացայ գործը քննող զինուորական դատարանի և հէնց մահվան պատժի մասին, բայց երբ ապացուցած չէ, որ թէ առաջինը և թէ երկրորդը համաձայնելի չէ ներկայումս լեհական թագաւորութեան մէջ տիրող օրէնքին, ուրեմն հիմք չը կայ միջոցներ ձեռք առնելու։ Բրիտանական կառավարութիւն կարծիքով, գտնելով գեներալ-հիւպատոսի ուղարկած տեղեկութիւններով, ներկայ դէպքում տիպ չը կայ միջամտելու»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՇԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) մրսուռեռ. հ.։

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱՒԱՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական և վիրաբուժութիւն։

Ա. Մ. ՓՈՒՐԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկամաց։

Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԻԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ե. Գուրգենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—6½—7½ ժ.։

Վճարը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կօն սիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

„ԱՕՏՐՈՒԴՆԻԿ“

ՄԱՐԻԱՄ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ

Գրավաճառանոց

(Բագու, Օլգինսկայա № 9)

Ընդունում է ամեն տեսակ հրատարակութիւններ կօմիսիայով և պահեստի համար։ Պ. պ. հրատարակիչներին խնդրում ենք ծանօթանալու համար ուղարկել իրանց հրատարակութիւնները և պայմանները։

(շ.) 8—50

Յանկացողներին

Թիֆլիսում, Սիօնին մօտիկ, Հերակլեան փողոցի վրա գտնվող № 15 փուլ եկած խանութը պատկանում է Սեանայ վանքին։ Տրվում է ցանկացողներին, իրանց ծախքով շինեն, իրանք նստեն խանութը, կամ վարձով տան որոշ ժամանակով։

Ցանկացողները թող իրանց պայմանները յայտնեն նամակով՝ հետեալ հասցէով. Въ Еленовку Эрив. губ., епископу Саркису Филоянцу. (շ) 1—5

Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

I

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ

Գինը 8 ր., կազմով 8 ր. 60 կ., 9 ր., 10 ր. և աւելի, նայած կազմին։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։

II

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻՑ ՌՈՒՍԵՐԷՆ

Լոյս տեսաւ ԵՐԿՐՈՐԴ պրակը։ Ամբողջ բառարանի բաժանորդագինը 5 ր., առաջին բառարանի բաժանորդների և գնողների համար 4 ր.։ Թիֆլիսեցիք և գաւառեցիք ռուսհայ լիակատար բառարանը կարող են ստանալ, իսկ հայ-ռուս լիակատար բառարանին բաժանորդ գրվել կարող են Համբարձում ուարկաւագ Քարիմեանցի մօտ (ТиФлисъ, Армянская Духовная Нерсисянъ Семинарія).

Ш

Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն։ Բաժանորդագինը 2 ր. 50 կօպ.։

օր. մ. 2—10

ԾԱԽՎՈՒՄ Է

ԱՆԹՐԱՑԻՏ

60 պուդ կամ աւելի գնողները Թիֆլիսում ճանապարհի ծախս չեն վճարում։

Նոյն տեղը ծախվում է նաև ընտիր

ՁՈՐ ՓԱՅՏ

Էժան գներով։ Հասցէն՝ Елизаветинская ул № 127, երկաթուղային վարչութեան կից։

(ու. շ. կ. ե.) 4—5

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Պ. Զախարբէգեանց

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՑԻՆ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.

ՏԷԼԷՓՕՆ № 1087

Սօլօլակ, Կերմօնտովսկայա փող., 16.

(ա. օ.) 100—150

ՄԵՆԴ

ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ

ՑԱՆԿԱՑՈՒՄ ԵՆՔ

բարի մարդկանցից մի որ և է գործ՝ օգնական հաշուապահի, կնտորշչիկ կամ գործակատար։ համաձայն ենք գնալ նաև ուրիշ քաղաքներ։ Հասցէն՝ «Մշակի» խմբագրատանը կամ Сурпъ Карапетскій № 16 Аршаку Шафарянцъ. 2—3

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, փետրվարի 17-ին

Հայոց Դրամատիկական Ընկերութեան թատերասէրների խումբը

կը ներկայացնէ

ԱՆԱԶՆԻԻ ՉԵՆ ԾՆՎՈՒՄ

Դրամա 3 գործ. Զ. Բօլիատի, թարգ. Ա. Մուրադբէգեանի

Մասնակցում են՝ տ. Զարիֆեան, օր.օր. Բեժանեան, Աբրահամեան, Յովհաննիսեան, պ.պ. Բէժանեան, Թորոսեան, Դաղարեան, Վանչիր, Տէր-Գրիգորեան և ուրիշներ։

Սկիզբն է երեկոյեան ժամի 8-ին։

Տեղերի գինը 50-ից մինչև 10 կօպէկ

Բէժիսեօր՝ Վանչիր

Հերթապահ կարգադահներ՝

Ամիրդեան Ն.

Մարկոսեան Ց.

1—1

5 ՀՈԳՈՒՑ ԲԱՂԿԱՑԱԾ

Մի թշուառ ընտանիք, որի մեծ անդամի աչքերը յանկարծակի կուրացան, իսկ կինը շաբունակ տկար է, կարօտ է օգնութեան մինչև որ միակ աշխատաւոր կուրացածի աչքերը բացվեն։ Նպաստները կարելի է ուղղել։ Троицкій тупикъ, д. Байрамова, № 7. պօստի մօտ։

1—5

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսոյս 18-ին, առաւօտեան 10 ժամին, ս. Լուսաւորիչ եկեղեցում լինելու է ծխականների ընդհանուր առաջին ժողով, եկեղեցու 1906 թ-ի մտից և ծախսից հաշիները քննելու և երէցփոխի նոր ընտրութիւն կատարելու, որի համար յայտնելով նոյն եկեղեցու երկսեռ ծխականներին, խնդրում եմ որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների բ. մասի գործակալ՝ Ղեոնդ քահ. Մամիկոնեանց

(շ. կ.) 1—2

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

Ա.ԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնն ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վեյեմինօվսկայա փողոց № 8.

(ե. հ. շ.) 27—100

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս սատմոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.

Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36

72—100

Որոնում եմ

Գրասենեակներում կամ մագազիններում գանձապահուհու պաշտօն. կարող եմ

Ներկայացնել և գրաւական

Հասցէն «Մշակի» խմբագրատուն։ 2—3

ԿԻՐԱԿԻ, ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ

Արտիստական ընկերութեան դահլիճում Հայոց Ազգագրական ընկերութիւնը կը տա

ՊԱՐ-ԵՐԵԿՈՅԹ

ԲԱՐԻԿԵՆԴԱՆԸ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

Դահլիճները զարդարված կը լինեն Նկարիչ պ. Ֆեթվաճեանի անձինական հակոյութեան տակ. մեծ դահլիճը կը ներկայացնի «Սուրբ Մարկոսի հրապարակը» Վենետիկում։ Երեկոյթի ծրագրի մէջ է մինչի այլոց կը կատարվի «Հարսանեաց գնացքը Վենետիկում», «Սիրերգ», «Իտալական ազգային պարեր», դիկավարութեամբ Կայսերական Մօսկվայի թատրոնի բալետմէյստեր պ. Մանեպանովի, պարեր՝ առաջնորդութեամբ պ. Օվերլոի։ Կը լինի վենետիկեան օմբրօլա (լոտօ) խաղագումարներով (25, 50, 75 և 100 ռուբլի), ծաղկամարտ, սերպանտինա (ոչ ոքի) և դրոշակներ։ Երեկոյթի ժամանակ նուագելու են՝ նէապոլիտանական, օպերային և դիւանական երաժշտախմբերը։

Սկիզբը ժամը 9-ին երեկոյեան

Տոմսակների գները՝ 2 ր. 20 կ., բարձրագոյն դպրոցների ուսանողներին՝ 1 ր. 10 կ.։ Տոմսակներ կարելի է գնել՝ պ. Ե. Մատուրեանի խանութում (Դվօրցովայա փող.), պ. Սուզանեանի երաժշտական խանութում և Մայզելսօնի խանութում՝ արտիստական ընկերութեան կից։ Երեկոյթի օրը՝ ժամը 6-ից երեկոյեան կասայում։

Երեկոյթի մանրամասնութիւնները կը լինեն ծրագրում։

տ. 2—3

Գրաւիչ գնով գրամոֆոնների ամենամեծ ընտրութիւն։ Գրամոֆոնների ամենամեծ ընտրութիւն։